

A row of four decorative initials from a medieval manuscript. From left to right: a stylized 'U' with vertical lines and a small crossbar; a 'H' with a central vertical stroke and decorative ends; a circular 'O' with a crossbar and decorative loops; and a 'S' with a curved shape and a small loop.

Ա Ա Ա Ա Գ Ի Բ

## ԵՐԱՎԵՐԻ ԲԵԼՍՈՒՐԻԿԻ ԳՐԱՎԻՏԱԿԵՐ ԵՒ ՔԵՎԵՐԻԿԻ

ՏՐԱՆԿՈՐԴԻ ՏԱՐԻ

Digitized by srujanika@gmail.com



ՅԵՐԱԿԱՆԻՒ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԱՆԵԱՑ

1875

# ՅՈՒՅՆԱԿ ԳՐԱՅ

Ի ՏՎԱՐԱՆԵ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՅՈՅՑ


## ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎ ԲԵԱՆՑ

ԵԿ ԱՐԺԱՐԱԿԱՆ ԽՈՅԵՆ

	ԴՐԱ	ԳՐԱ
Աղջիկան. Հայերենէ զավաց ՚ի Տամլերեն Յ. Քիւրքշամանիք . տպեալ 1872.	4	
Աղօժառիկոք Արքայան տեղեաց . ոչխարհիկ լւդուաւ .	2	
Անուշը. ՚ի Ախմ. ողեաց Մ. Թափուլ. 1869.	1	20
Առաքինութեան Համբան, կամ Մենապ մանրանց, թարգմանաց Տ. Հ. Թ. Ա.	7	
Աւասպանն առնենի. Ա. Եկեղեցայ մէջ կարդացութիք առևտարաններն են .	30	
Աւասպանն վաքք . Տպեալ 1867.	6	
— Նոյն կամականալ . Տպեալ 1867.	12	
— Նոյն հաշու . Տպեալ . 1868.	30	
Բանավաստթիւն, աշակելառահեաց մէջ. Բ. Տիալ 1874.	1	
Բայցարութիւն Հրանտարման եւ զլման եւ առաւտուան երգոց չնորհապ . (*)	6	
Գագիկ վրդին արքաց Հայոց Բագաստանի, ողբերգութիւն . Տպ. 1672.	5	
Գարեգ Առաքելոց . Տպեալ 1867.	6	
Գարեգ Առկիլիկի Ասմանէ Աստրէի հրեի . Տպեալ 1867.	3	
Գավառանեք . Տպեալ 1867.	3	
Եղջէ . պատմաթիւն Վարդանանց պատմակալմին ընուիր դործ նավահաց .	7	
Երեւայթ կրից . Տպեալ 1851.	7	
Երկու խօսք . Եկեղեցաց պաշտօնելից ուղղուած . Տպեալ 1873.	3	
Երկու խօսք . աղօժառիկոք, դործ նախնեաց . Գ. տպադ . 1870.	7	
Զանազանթիւն հմագ գարուց . Բ. տիալ . 1862.	40	
Շնորհանրական թուշթէ Շնորհանրական . Տպեալ . 1871.	18	
Շնորհանրական իրաւուն . Գ. տիալ 1870.	18	
Թափառի տետրակ տաղեկան . Տպեալ 1839. (*)	3	
— Նոյն սուրբ ամեան . Տպեալ 1838. (*)	2	20
— Նոյն Ա. Յակովոց տաճարին մէջ կասարուած թափառներու համար	4	
Թուարաննթիւն համատառ . Ա. Պ. Փախազեանցի, Գ. տիալ . 1869.	3	
Ժամանակիր . Խոշորագույն . Տպեալ 1866.	20	
Ժամանակոք տաճենի . Տպեալ 1870.	50	
Խնձիր Ա. Տեղեաց եւ նորա պաշտօնական քննութիւնը . Տպեալ 1871. (**)	6	
Խորհրդածութիւն Ա. պատարադի, դործ նախնեաց . Տպեալ 1842.	10	
Խորհրդածուր Ա. պատարագի . Տպեալ 1873.	10	
Կարդարութիւն առաջնութեան . Տպեալ 1871.	5	
Կիւնապարութիւն Բասաքալոց . Տպեալ 1869.	2	
Կրտսերդիր Հոգեշահ ըամից . Գուց Արդար Խոնենց . Տպեալ 1853.	6	
Կրիւտան Աւասպանական ըամից . Դաս Ա. Արմեն Գետրոս .	1	20
” ” ” Դաս Բ. Ասմարացի .	1	20
” ” ” Դաս Գ. Որդիք Աստուծոյ .	1	20
Համազառութիւն երկարաման առաքելոց . Համերձ յաւելուածով .	4	
Համատառնթիւն Քրիստոնէական ուահան . Տպեալ 1873.	4	
Հայելի վիրաց . Տպեալ 1852. (**)	6	

ԵԱԿԱՆ ՕԹՈՒՅ ԹԵԿԱԿ

Մէկ առաջնութիւն (\*) այս գրքի հայուսագիր ըստու իւսուածէ .  
Եկեղեց (\*\*) բարբար պատճեն ըստու .



Ա Յ Ֆ Ո Շ

ՏԱՄՆԵՐՈՒ ՏԱՐԻ  
ԹԻ 1.

Ա Մ Ս Ա Գ Ի Բ

ՅՈՒՆԻ.ԱՐ 31  
1875.

Ա.Զ.Պ.Օ.Բ.Ի. Բ.Օ.Խ.Օ.Խ. Ե.Խ. Գ.Բ.Գ.Ի.Ց.Ա.Կ.Ա.Ն

## Ն Ա Բ Տ Ա Ր Ի

ԽՈՅՀԵՐԴԱԾՈՒԹՅԻՒՆ ԿԵՆԱՅ ԵԿ ՄԱՀԱԿԱՆ ՎՐԱՅ

ՏԱՐԻՆԵՐ անցան, և ահա տարի  
միեւս անցառ. նոր տարի մ'ալ կը յա-  
ջորդէ, ամսնք մեռան, ամսնք կ'ապ-  
րին. որ տւուր՝ և կեանք մահու. կը  
յաջորդեն. սիրոս կը տրոտի, միաբա-  
կը յուղի, հոգիս կ'ամրիխի. կը մնա-  
ծեմ, զանազան տիտոր յիշատակներ  
կ'արթմնան որոխ մեջ, որոց մասին  
սիրովանք կ'որոնեմ և սիրովանքս հե-  
տեւեալ խորհրդածութեանս մեջ կը  
գտնեմ:

Մինչ յօդ կարծէի, որ աշխարհը  
մարդց վայերից կայանն է, կարծէի որ  
մահը կարդ և կանան ունի. կարծէի,  
որ բարիներն անօթիշտ կը մնան աշխար-  
հի վրայ և չարերը միայն կը տառա-  
գինեմ:

այն, կարծէի որ Արեգակն արդարնե-  
րուն միայն կը ծագի, և անձրե-  
ւոյն անման վերայ միայն կը տեղայ. կարծէի որ համուն սրուուղները միայն  
ծառէն կը թափին, մոտալու ծառնն  
կային զարմաղ չըլլ որ, վարւը չը բա-  
ցուած չը թառամիր, ճրադին իւղը  
չոսպառած չը մարդիր. վերջապէս իր-  
բեւ տկար մորդ կարծէի, որ աշխա-  
տացն իւր աշխատութեանն արդիւնքը,  
հարուատն իւր գիշած հարասութիւ-  
նը, թագաւորն իւր թագն ու գահը  
մշանվենապէս պիտի վայելն, ահա  
այս ամեն կարծիքներս կը տեսնեմ որ  
ամեն օր կը փայնի, և անցած տարւոյն  
մեջ բանի քանի անգամ փշեցան:

Անուբանալի ճշմարտութիւն մ'է ,  
որ Տարգին հողէն առաւ իւր քամինը ,  
հողան պէտք է այս , հողէն գտաւու  
րեցաւ և ՚ի հող պիտի գտանայ , ա-  
մեն որ այս ճանապարհէն պիտի անց-  
նի եւ պիտի խմէ մահու քայակը .  
սակայն գաղտնիքն այս է , որ ոչ օրն  
յայտնի է և ոչ ժամն . ամենօրեայ  
գէպէրը կը վկայեն՝ թէ մահը մար-  
դու վրայ կը հասնի ՚ի ժամն և ՚ի տա-  
րաժամն , մահը կը զբէ իւր ճիրա-  
նին մանուկ և երիտասարդ . կատա-  
րեալ և ծեր , հորուստ և աղքատ :  
Երբէք մէկը ըլ վատահի իւր հասա-  
կին և առողջութեան վրայ , ըլ վատա-  
հի իւր առոցութեան և զօրութեան  
վրայ . վասն զի մեռնիլը կարգ չ'ունի .  
մահը խիզճ և խորութիւն չ'ունի , օր-  
հասը պայմանաժամ չ'ունի , նորա  
պայմանաժամը Ամենակալ Նախախնա-  
մողին ձեռքն է : Կը տեսնես պատահի  
մը ամենայն կատարելութեամբ լի ,  
մորմնալ զօրաւոր , վիճակաւ հա-  
րուստ , և ահա մահուան գերանդին  
ը խնայեր նորա կենաց նորահիւս թե-  
լը կտրելու , կը տեսնես ուրիշմը մարմ-  
նալ տկար , երեսը գոյն ըլ կոյ , աղ-  
քատութեամբ թշուառացած , ցամաք  
հացի կարօտ , այսու ամենայնիւ մա-  
հը նորա ըլ մօտենար , կը տեսնես ոշ-  
խայժ երիտասարդ մը գեղեցիկ բաղ-  
ձանքներով լցուած , և ահա յանկարծ  
մահուան զահ կը լըսայ , իսկ անդին զա-  
ռամեալ ծեր մը , վերջին աստիճան  
անզօր , աչքերուն մէջ լցո չ' մնա-  
ցած , իւր մահը կը խնդրէ , այնու ա-  
մենայնիւ զեռ կ'առրի : Ո՛հ , այս  
ի՞նչ անհասկանալի գաղտնիք է , այս  
ի՞նչ անիմանալի խորհարդ է , եւ  
ով կարող է այս գաղտնեաց թափան-  
ցել և Աստուածացին անօրինութեան  
գլուխ գանդատիլ , քանի որ նորա տնօ-  
րինութիւնը անիմանալի է , նորա մե-

ծութիւնը բարձր է քանի զամենայի մե-  
ծութիւն , նորա խորհութը խոր է և  
նորա կամքը անհամեմատ վեր է մեր  
կամքէն . նա աէր է կենդանեաց և մե-  
ռելոց , նորա քանդածը ըլ շնուրի և  
նորա շնածը ըլ քանդուիր , նա կա-  
րող է գատաւորները յիմարեցնել և  
թագաւորները գերի վարել : Ուստի  
մենք ամենքնիս ալ Աստուծոյ ձեռքն  
ենք , մեր ունեցածն ալ անորն է , մենք  
ալ անորն ենք , նա երբ կամի մեր ու-  
նեցածն մեր ձեռքէն կ'առնեաւ , և երբ  
կամի զմեզ կը կոչէ . մեր ձեռքէն ա-  
ռած ժամանակ չենք կարող արանջալ  
և զմեզ կոչած ժամանակ չենք կարող  
չ'երթալ , ըստ որում մեր ունեցածնե-  
րը մերը չ'են , իբրեւ աւանդ են . և  
մենք աւանդապահ պանդուխոտ ենք  
աշխարհիս վրայ . անշուշտ պիտի եր-  
թանք օր մը հան , ուր գնացին մեր  
սիրելիներն ու զաւակները , մեր եղ-  
բայրներն ու սպականները , նորա  
գնացին մեզմէ բամենուելով , մենք մնա-  
ցնեք անանցմէ բամենուելով : Այս բա-  
ժանման մէջ բնականաբար կը տրու-  
մինք . բայց պէտք չէ յուսահատելու  
չափ արտօմինք եւ սգանք , վասն զի  
այս հեթանոսական գործ է , չափա-  
ղանց սգալ , չափաղանց սգալ հեթա-  
նոսական սպարութիւն է , Քրիստոնէ-  
ութիւնը այս գիրքը չ'ընդունիր , մենք  
յայս ունիմք վերսախն կենդանանալ և  
միիթարութիւն ունինք վերսախն անո-  
նել մեր սիրելիները : Հեթանոսներն  
այս յուսոյ միիթարութենէն զուրկ  
են : Մեր հաւատքը մեզ կ'ուսուցանէ  
որ մեր բաժանումն յաւիտենական  
չ'է , այլ ժամանակաւոր , մեզմէ բաժ-  
նուալները կը փափաքին մեզ հետ մի-  
անալ և մենք կը փափաքիմք զանոնք  
ուեսնել , և միշտ է կարելի է անոնց նո-  
րէն յաշխարհ գունալ , կարելի է երկ  
նոցին հայրենից վերինն Երաւաղէ-

մի քաղցրութիւնը մերմել և աշխարհիսկանդիսութեան դիմել, մի թէ կարելի՞է անժամանակ յարութիւն տռնել, ոչ երբէք. այլ պէտք է իմանալ որ ճանապարհորդութեան կարգը մերըն է, մենք ստիպուած ենք երթալ անոնց մօտ, ստիպուած ենք թողուլ զաշխարհ, վասն զի մերը չէ. ստիպուած ենք յանձնել մեր մարմինը հողուն, վասն զի վճռուած է. Եւ ստիպուած ենք հեռանալ աշխարհէն վասն զի մեր հայրենիքը չէ. այլ մեր հայրենիքը երկինքն է, մեր սեպհական տռւնը այն տեղ է, մեր երջանկութեան կայանը և առաքինութեան յաղթանակը այն տեղէ, երանական կեանքը անդ պիտի վայելնենք: Այս է Նախախնամութեան անօրէնութիւնը, այս է մոհկանացու մարդոց վախճանը:

Ուստի քանի որ աշխարհիս մէջ պանդուխու ենք եւ ճանապարհորդ, քանի որ մահուան պայմանաժամկը մէզնէ ծածկեալ է, ինչու աշխարհիս պատրանաց նշաւակ եղած՝ յաւելուենական կեանքը անցաւորին կը զոհնենք, անժամանակը ժամանակուորին և հոգին մարմայ հաճայից կը մասնենք, առանց գիտնալու թէ երբ է քաժանաման օրն ու ժամն: Արջափ անտարբերութիւնն և անզգայութիւնն: Թշուառմարդ, ոչ դէպքերէն կը դատաւանայ, ոչ պատուհաններէն կը սարսի և ոչ Աւետարանական Ճշմարտութեանց ականջ կը դնէ, մի կողմէն մի օր կամ մի ժամ ապրելու ապահովութիւննէ զուրկ լինելը զգալի կերպիւ կը տեսնէ, այնու ամենայնիւ միւս կողմէն երկար տարիներ ապրելու ապարաստութիւններ կը տեսնէ: Մէկը ահագինն տուներ կը չինէ նատելու համար, ուրիշ մը թագաւոր կըլլայ ալիքելու համար, ուրիշ մը հարստութիւններ կը դիզէ

վայելէլու համար, ուրիշ մը համարտարաններու մէջ տարիներ կը զահէ՝ ամեն գիտութիւն գլխուն մէջ լեցնելով, բնութեան գաղտնեաց թափանցելու համար, սակայն մահը, տարաժամ մահը, անխափի ամենքն ալ հողով կը պսակէ, ցոց տալլով աշխարհի, որ ը կայ տեւական հանգիստ, ը կայ ճըշմարիտ ուրախութիւն աշխարհի վայ. աշխարհը ստար, տեսածնիս օտար, ունեցածնիս օտար, մարմիննիս ալ օտար: Արդ՝ այս ամենը յայտնի ըլլալով ինչու ուրեմն մէկզմէկ կը գղենք, մէկ զմէկ կը թշնամանենք, մէկզմէկ կը մատնենք, մէկ մէկու կը նուխանձնենք, մէկ մէկու ձեռքէն կը յափշտակենք, զմիեւալը կը տառապի, անմեղը կը բռզոքէ, թշուառը կը հառացէ. խեկ մէնք տակաւին անզդայութեան փոսին մէջ կը գործենք՝ ինչ որ խղճի դէմէ, կը խօսինք՝ ինչ որ Ճշմարտութեան հակառակ է. կը հաւատանք՝ ինչ որ անստոցք է: Ո՛հ, այս ինչ հակառակ ընթացք է մեր բուն վախճանին եւ նորատակին. որուն է արդեօք մէռնելու կարգը եւ որուն է յոդթանակը: Այս անցաւոր կենաց առարկզմն մէջ բռնաւորն է ալիրազ թէ զմիեւալը. Ճնշողն է վնասող թէ Ճնշեւալը. հաղածնզն է ուրախ թէ հալոծեալը. հարուստնէ հանգիստ թէ աղքատն. խաջողն է յաղթող թէ խաշեալը. որուն է արդեօք մահուան կարգը: Ահա այս է ամենամեծ գաղտնիքը. զր Աստուած ծածկած է մէզնէ մեր բարութեան համար, ծածկած է օրն ու ժամը, օրովէս զի սթափի բռնաւորն իւր բռնութիւններէն, Շողուճնշողն իւր Ճնշումները, արթնցը. նէ խաչողն իւր ապառաժ սիրտը, ը վատահի հարուստն իւր հարստութեան վայ, թագաւորն իւր փառաց և պերճութեան վայ, զրտուորն իւր

զօրութեան վրայ , այլ կիսնան , որ մահը վաղահաս է , օրհան յանկարծական է , աշխարհիս ամեն բաներն ունացն են , երազ են , առ աչքը տեսիլ ներ են : Երբ այս տմենը մարդ միան գամ մտածէ և իւր խորհրդածութեց նիւթ ընէ և ընդ նմին իւր միտքը առ Աստուած բարձրացնէ , ալ Բ'նչպէս կը համարձակի աշխարհի հետ սերտ կապով կապուիլ եւ մարմնոյ հաճոյից գերի ըլլալ . հոգի տուժել և երանական միմիթարութենէ զրկութ :

Ուրեմն մէնք մահուն անստուգութեան յիշուտակը նպատակ ունենալով ամեն վարկեան արթուն և պատրաստ ըլլանք , աշխարհ տուժենք եւ հոգի շահնիք . ժամանակաւորը զոհենք եւ յաւխտենականը վաստիինք , որ մերձ կոյ առ մեզ , այն ատեն մահը չէ կարող իշխել մեր վրայ , այլ մէնք մահուան կ'իշխենք , այն ատեն մահը մեզ համար կեանք և անմահութիւն կ'ըլլայ , այն ատեն մեռնելէն երբէք չենք սոսկոր , այլ ուրախութեամբ կը դիմենք նման այն պանդուխտ ճնապարհորդին , որ իւր պանդխառութեան օրերուն մէջ կատարեալ խոհեմութեամբ վարուելով , կեանքը ըստ անօրինած , վաստակները օրինաւոր կերպով պահած , միշտ հայրենիքը նպատակ ունենալով շարունակ պատրաստ կը գտնուի . երբ ճանապարհ կ'ենէ , իւր սիրելիները տեսնելու յուսով սիրուը ուրախութեամբ կը բարախէ , այս

պէս ալ , եթէ մենք աշխարհս օտար երկիր ըլլալը ճանշանք , եթէ մեր այս պանդխառութենք օրերը խոհեմութիւն արթնութիւն անցնենք , եթէ մեր յուրիւնական հայրենիքը շարունակ յիշենք , այն տաեն մենք ալ մահը իրրեւ բուն հայրենիք տանող ճանապարհ մը կը ճանշանակի և նորա հասած տաեն անկէ չենք սարսափիր , վասն զի Առաքելցն ըստածին պէս այս աշխարհիս մէջ միաւ վիք քաղաք շունինք . մեր քաղաքափառութիւնը երկինքն է , ուր որ մեր Փրկիւթ Յիշուտա Քրիստոս և երջանկաց դասը կը գտնուին , հան պիտի երթանք . մեր բոլոր կեանիքը հան երթալու պատրաստութիւն մ'է : Ուրեմն ամեն վարկեան այս ճանապարհորդ աւթեն համար պատրաստ գտնուինք , վասն զի ոչ օրը գիւտենք և ոչ ժամը և վասն զի կու գոյ գիշեր , որուն մէջ մէկը չէ կարող դորձել :

Նոր պարգեւ մը համարինք Նոր խախնամութենէն ներկայ տարին , նոր առաքինութիւններ գործենք , նոր բարիքներով ճոխանանք , նոր թեւեկով թեւաւ որինք , վասն զի օ գիտէ թէ մենք եւս նոր տարւոյս հետ պիտի չը թռափիք գէս ՚ի յաւխտենականս թի , վասն զի ինչպէս թռաւ հին տարին , թռան շատ մարդիկ աշխարհէս , այս պէս պիտի թռաչի նորն եւս , և պիտի թռաջն շատ մարդիկ եւս գէս ՚ի յաւխտենականս թիւն . . . .

Մ . Վ . Կ .

ՄԱՐԴԱՐԵԱԿԱՆ ՅԱՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

ԸՆԴ ՄԷՋ

ՀԻՆ ԵԽ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

(Յարուշակութիւն և վերջ, տես թիւ 12. 1874.)

Հ. ԶԲՇՆԵ է հետագայ մարդարեռթիւն վասն Քրիստոսի խօսեցեալ ՚ի սուրբ Գիրք :

Պ. Ե մարդարեռթիւնն Միքիսայ . զի սա է որ կանխսածայնեաց զտեզի ծընդեւան Քրիստոսի և այլ չորս Հայոց նորին . ըստ սյամ թմէ . “Եւ դու Բեթը է հեմ տուն Եփրատայ , ասկաւաւոր իշես լինել ՚ի հազարաւորս Յուղաց , ՚ի քէն եցէ ինձ իշխան Խորսցէլի , և ելք նորա ՚ի սկզբանէ աւուրց աշխարհի : Վասն այսորիկ տաց վնասա մինչ չեւ ՚ի ժամանակ ծննդականնի . ծնցի , և մնացորդք եղաց նորա գարձցին առ որդիսն Խորսցէլի : Եւ կացցէ , և տեսցէ և հովուեցէ հօսի խրց քրութեամբ Տեառն , և ՚ի վառս անտառն Տեառն Աստուծոց իւրիանց հաստատեցն ո . գլուխ Ե . հմ. 2-4 :

Ըստ վրայեց Աւետարաննշն յայտէ , զի Քրիստոս ծնաւ ՚ի Բեթը հեմ Հրեատառնի , յոււուրս Հերովլէի արքացի . ահա մոգք յարեւելցից եկին յԵրուսաղէմ : Եւ տան՝ ուր է , որ ծնաւ արքայն Հրեից զի տեսաք զասաղն նորա յարեւելս , և եկաք երկիր պատգանելնմա : Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովլէս , խառվեցաւ և ամենայն Երուսաղէմ ընդ նմա : Եւ մոզովեալ զամենայն Քահանայապետ և զՄագիրս ժողովլէան՝ հարցանէ ՚ի նացանէ , թէ մւր ծնանիցի Քրիստոս :

Եւ նոքա ասեն ցնա ՚ի Բեթը հեմ Հրեատառնի . զի այսպէս գրեաւէ ՚ի ձեռն Մարդարենն : Եւ դու Բեթը հեմ հեմ երկիր Յուղաց , և այն որ զինի : Մագ . Բ . 1-5 :

Ըստ սյամ ե ՚ի Առ կատաւ ՚ի գլուխ . հմ. 3-7 . ուր տոէ . “Եւ երման յին ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւրաքանչիւր քաղաքի : Ել եւ Յովեէի ՚ի Գալիլիէ ՚ի քաղաքէն նաշխարեթէ ՚ի Հրեատառն ՚ի քաղաք Գաւթի , որ կոչի Բեթը հեմ Վասն լինենց նորա ՚ի տանէ և յաղգէ Գաւթի : Մտանել յաշխարհագիր Մարիամուհանգերձ , որ խօսեցեալն էր նմա , և էր յզի : Եւ եղեւ ՚ի հասանիլ նորա անդր , լցան աւուրբ ծնանելց նորա : Եւ ծնաւ զՄրգին իւր անդրանիկու :

Հ. Եւ զԲՇՆԵ է մարդարեռթիւն Անգեաց վասն Քրիստոսի :

Պ. Ի Գլուխ Բ . հմ. 6-9 . տոէ , “Եւ բանն՝ որ ուխտեցի ընդ ձեղյեւ լանելն յԵրկիրէն Եգիպտացւոց , և հոգի իմ որ կայ ՚ի միջի ձերում քաջալերացարուք : Զի այսպէս ատէ Տէր Ամենակալ . գարձեալ միւսանգտոմ շարժեւցից վերկինս և վերկիր , և զծով եւ զցամաք : Եւ միւսանգամ շարժեցից զամենայն ազգս , և եկեցէ ընտիր ընտիր յամենայն ազգաց , և լցուցից ըզւտունդ զայդ վառօք , ատէ Տէր Ամենակալու :

Ըստ սյամ ե և մարդարեռթիւն Մազարեայ , որ ՚ի գլուխ Պ . հմ. 1 . տոէ . “Ահա ես առաքեմ զՀրեշտակի իմ , և տեսցէ զՃանապարհու իմ առաջի իմ , և յանկարծակի եկեցէ ՚ի տաճար ինքնին Տէրն . զօր գուք խնդրէք , և Հրեշտակին ուխտին , զօր գուք կամէք , ահաւասիկ գայ ատէ Տէր Ամենակալ : Յայսմ Հրեշտակ ուխտին , զօր առաքելոց էր Տէր , և զօր Հրեայք և հեթանոսք խնդրէին և զօր կամէին , էր Մեսիայն ըստ ուխտի նախահարց իւրեանց Աբրահամու , իսահակոյ եւ Յակովուու :

Եւ Հրեշտակն զորմէ տոէ , “Տեսցէ

զՃանապարհու իմ առաջի իմ, և սուր-  
բըն Յովհաննես Մկրտիչ կարապետ  
Քրիստոսի իպոտրոսառել զՃանապարհ  
նորոց ո:

Հ. Եւ զի՞նէ Մարդոքէութիւնն  
Զաքարիայ վասն Քրիստոսի :

Պ. Աս ի Մարդոքէութեան իւ-  
րում ի զանազան տեղիս խօսի զայն-  
պիսիս, որբ յայնապէս վերաբերին  
առ Քրիստոս, զօր օրինակ.

Նախ ի գլուխ Զ. Հմ. 12—15.  
ասէ . “ Եւ ասացես յնոս, այսպէս ա-  
սէ Տէր Ամենակալ, Ահա այր և ծա-  
գումն անուն նորա, և իներբայ իւրմէ  
ծագեսցէ, և շնեացէ զուռն Տեառն :  
Եւ նա ասցէ զբաջութիւնն նաոցի և  
տիրեսցէ ի վերայ ամսուաց իւրայ, և  
եզրցի քահանայն ընդ աջմէ նորա . և  
խորհուրդ խաղաղութեան ի սէջ եր-  
կոցունց : Եւ պատկդ եզրցի այնոցիկ,  
որբ ակն ունին և պիտանեաց նորա և  
որոց ճանաչն զնոս . և ի շնորհս որդո-  
ւց Ստիսեաց, և յերգս տան Տեառն,  
Եւ յետ աւուրց ի նոցանէ եկեսցեն  
և շնեացեն զուռն Տեառն . և ծանի-  
չիք, թէ Տէր Ամենակալ առաքեաց  
վիս առ ձեզ, և եզրցի եթէ լսելով լը-  
ւիցէք ձայնի Տեառն Աստուծոյ մերցու-

Երկրորդ՝ գուշակէ նա զգալուստ  
Քրիստոսի յԵրուսաղէմ իբրեւ զմա-  
գաւոր նորա . ըստ այնմ թէ . “ Աւ,  
ըսին լեր յոյժ գուստը Ախնի, քարո-  
վեա գուստը Երաւսաղէմի, ահա թա-  
գուստը քո գոյ առ քեզ, արդար եւ  
Փրկիչ, նոյն հեղ, հեծեալ ի վերայ ի-  
շո և յաւանակի նորոց ո: Թ. 9:

Եւ այս է, որ գրի ի Մատթէոս ի  
գլուխ ԽԱ. Հմ. 4. թէ, “ Բայց այս  
ամենայն եղեւ, զի լցոցի բան Մարդո-  
քէին : Ասացէք, զստեր Ախնի, ահա  
թագւոր քո գոյ առ քեզ, հեծեալ  
յէշ և յաւանակի իշոյ ո:

Եւ ի Յովհաննու ի գլուխ ՖԲ.

Հմ. 15. ասէ , “ Մի երկիւչիր գուստը  
Ախնի, ահաւաղիկ թագւոր քո գոյ  
նաուեալ ի վերայ աւանակի իշոյ ո:

Երրորդ՝ մարդոքանոց սա զմու-  
զուլի Քրիստոսի զմեզս մարդկան, ըստ  
այնմ թէ . “ Յաւուր յայնմիկ Եզրցի  
ամենայն տեղիս բացեալ տուն Դաւթի  
ի փափօխումն և ի սրսիումն : Եւ ե-  
զրցի յաւուր յայնմիկ բարձցէ Տէր  
զանուանո կռոց յերկրէ, և ուշ ե-  
զրցի յիշատակ նոցա, և զաւա մար-  
դոքանոն եւ զայս պիղչս բարձցէ  
յերկրէ ո: ԺԴ. 1, 2:

Չորրորդ՝ նախաձայնէ սա նաև ըդ-  
չարչորանաց Տեառն և զմոզուլի վիա  
յաշակերտացն և փափսին, ըստ այնմ  
թէ . “ Զարթիր առւր ի վերայ հավուի  
իմոց, և ի վերայ առն ընկերի նորոց,  
ասէ Տէր Ամենակալ, հարից զհովիւն  
և ցրտեսցին խաշնիքն, և դարձուցից  
զմեռս ի վերայ հավուաց ո: ԺԴ. 7:

Այսմ վիայէ և Աւեւարանն սուրբ,  
զի ի ժամ մատնաւթեան Տեառն թու-  
զին վետ աշակերտոն և փափսեան, ըստ  
այնմ թէ . “ Ա. Այս ամենայն եզրէ  
վիացի Գիրը Մարդոքէիցն, յայնձամ  
աշակերտոն թողին ամենուքեան և փա-  
փսեան ո: Մաք. ԿԶ. 56:

Հմեգերորդ՝ նախաձայնէ սա և վա-  
սոն վաճառման Քրիստոսի երեսուն  
արծաթի, ըստ այնմ թէ . “ Եւ ծանիկ  
ցեն Քանանացիքն զիսաշնոս պահեստի  
իմոց՝ զի բան Տեառն է : Եւ ասացի  
յնոտա, թէ բարւոք թուի յաչս ձեր,  
տուք գլարձ իմ, ասկա թէ ոչ զայց  
արարէք : Եւ կշռեցին զլարձ իմ երե-  
սուն արծաթի, և ասէ ցիս Տէր, սրկ  
գու զայդ ի բոլս, և քննեամ, թէ փորձ  
իցէ, որպէս և ես գուայ վարձ վասն  
նոցա, և առի զերենսուն արծաթին և  
արկի ի տուն Տեառն ի բոլս ո: ԺԱ. 11—13:

Բատ այսմ է, որ գրի ի Մատթէոս

զԼ. իէ. 9, 10, ուր առէ, “Յայնժամ լցաւ որ ասացաւ ՚ի ձեռն Երեմիաց մարդ որէին, առին զերեսուն արծու թի զի վաճառելց, զըր առին յորք գւոյն Խորացէլի, և ետուն զնա յագուրակին բրտի, որպէս հրամացեաց ինձ Տէր” :

Վեցերորդ՝ նախաձայնեալ է սա և զնեզուն Քրիստոսի զՀոսին Առւրբ ՚ի վերաց բնակչացն Երուսաղէմի, եւ զիսծելն բազմոց ՚ի վերաց նորա, բատ այնմ թէ, “Եւ հեղից ՚ի վերաց տանն Դաւթի, և ՚ի վերաց բնակչաց Երուսաղէմի հոգի շնորհաց և գիտութեանն Եւ հայեցին առ իս փախանակ կարաւելցն, և կոծեացին ՚ի վերաց նորա կոծ իբրեւ ՚ի վերաց սիրել ո՞ն, և աշխարհացեն աշխարհ իբրեւ ՚ի վերաց անդրանիան” : ԺԲ. 10 :

Զիատարումն այն մարդարէու թեան գրեալ է ՚ի Գործս Առաքելց ՚ի գլուխ թ. հմ. 33-38. ըստ այնմ թէ, “Հոգւոյն Սրբաց ընկալեալ ՚ի Հօրէ սիստեաց զայս, զոր գուք իսկ տեսանէք և լուր: Արդ՝ Ճշմարտիւ գիտացէ ամենայն տունդ Խորացէլի, զի Տէր զնա և օծեալ Աստուած արար զայն Յիատոս, զըր գուք խաչեցիք: Եւ լըւեալ զայս զվացան ՚ի սիրատ իւրեանց, և ասեն յՊետրոս և ցոյլ Առաքեալոն, զինչ գործեացուք, սկզ եղաքը: Ասէ ցնոսա Պետրոս ապաշխարեցէք, և միրտեսցի իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ յանուն Տեառն Յիատոսի Քրիստոսի ՚ի թողութիւն մեղաց, և ընկալվիք դաւետիան Հոգւոյն Սրբաց” :

Եւ ՚ի Առեկասու գրի, “Եւ Երեմայր զշետ նորա բազմութիւն ժողովրդեան և կանանց, որք կոծէին և աշխարէին զնա” : ԻԴ. 27 :

Հ. Յետ առաջ քո զկարգ յագնաթիւ մարդարէից յազգէ Երբացեցւոց խօսեցէալ զգալստենէ և զնանաւոր

հանդամանաց անձին Քրիստոսի, չի՞ք և յօտար ազգաց կանխառաց որ զՔրիստոսէ :

Պ. Այս են երկու նշանաւոր անձնելոք, որք ոչ եին յազգէ Երբացեցւոց, այլ կանխառացնեալ են զայնովիսիս, որք վերաբերին առ Քրիստոս, և այս երկու անձնիք եին Բաղասամ և Յովք :

Հ. Զինչ էր նախագուշակութիւն Բաղասամց վասն Քրիստոսի :

Պ. Եպիկոսի առէ ասալ Յակով բայց, և յարիցէ այր յԽորացէլի, և հարցէ վիշտանս Մովսրաց, և առցէ զաւար զամենացն որդիս Ս. Թայ: Եւ յարիցէ այր ՚ի Յակավըց, և կորացէ զապրեալն ՚ի քաղաքէ անափ: Թուր ԻԴ. 17, 18:

Այս վկայէ Յայտնութիւն Յովհաննու, զի Քրիստոս կամ ասալ առաւտեան ծագեալ յազգէ Յակովըց, և հարցէ վթշնամիս եկեղեցւոց, ասցէ զնեթանաս ՚ի ժաղավարդ իւր, և թագաւորեացէ յաւելուան: ըստ այնմ թէ, “Ես Յիատոս առաքեցի ըդ Հրեշտակ իմ վկայել զայս ձեզ եկեղեցւոց, և եմ յարմատոց և ՚ի սեռէ Դաւթի, և ասալ պայծառ առաւօտուն: ԻԲ. 16:

Ըստ այսմ է և Սովորա Դաւթի, որ ՚ի գլուխ թ. հմ. 6-9. առէ, “Ես կացի թագաւոր ՚ի նմանէ ՚ի վերաց ըրբինն Սիօնի սրբաց նորա ՚ի պատմել զհրաման Տեառն: Տէր ասաց յիս որդի իմ ես գու, և ես այսօր ծնայ ըդքեզ: Խնդրեամ յինէն և առց քեզ զնեթանաս ՚ի ժառանդութիւն, և յիշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի: Հովուեցես ցնոսա գաւաղանաւ երկաթեալ, որպէս զանօթք բրտի փշեցես ցնոսա” :

Հ. Եւ զինչ էր նշանաւոր յայտնութիւն Յովքայ վասն Քրիստոսի:

Պ. Զի ՚ի գլուխ ԺԲ. հմ. 25-27.

ռուէ , « Քանզի գիտեմ , զի մշտինուար է , որ լուծանեցն է զիս յերկրէ յարտցանել » . Զմորէմ իմ որ կրեաց զոյս ամենայն , 'ի Տետունէ վճարեցաւ ի՞ն այս : Զօր ես անձին իմում իրագէտ եմ , զօր ակն իմ հանո և ոչ այլ որ , ամենայն ինչ վախճանեցու 'ի ծոց իմ ո :

Հ . Ե՞րբ կատարեցի այս նախասացութիւն Յովեաց :

Պ . Յորժամ Քրիստոս Փրկիչն մեր եկեղեցէ յերկնից ամպօք և Հրեշտակօք յարտցանել զմեռեալո , դատի զաշխառէ եւ յաղթել թշնամեաց . յայն ժամ որդիքն Աստուծոց յարտցեալ մարմարին տեսցեն զԱստուծո զՔրիստոս Փրկիչն մեր Եմմանուէլ , որ է ընդմեղ Աստուծոց յայտեալ 'ի մարմին :

Ըստ այսու է և 'ի Թեսալընիկեցւոյ ի գլուխ Կ . ՀՄ . 15 . 16 . ուր զրի . « Զի ինքն Տէր հրամանաւու և 'ի ձայն Հրեշտակապեամին և 'ի փող Աստուծոյ իջանէ յերկնից , և մեռեալը 'ի Քրիստոս յարիցեն յառաջացացոյն : Ապա և մեք՝ որ կենդանւցն մնացեալ եմք , նոքօք հանգերձ յափշտակիցուը ամպովք ընդառաջ Տետան յօդս . և այն պէս յամենայն ժամ ընդ Տետոն լինի ցիսք ո :

Եւ յառաջնն Կորնթացին առէ . « Եւ ապա կատարած , յորժամ տացէ 'ի ձեռաս զժագաւորութիւնն Աստուծոց և Զօր . յորժամ խափանեացէ զամենայն իշխանութիւն եւ զամենայն պետութիւն և զօրութիւն . Զի պարտ է նըման թագաւորել , մինչեւ դիցէ զամենայն թշնամին 'ի ներքոյ սոխց իւրոց : Ցետին թշնամին խափանի մահ . և զամենայն ինչ հետաղանդ արար 'ի ներքոյ սոխց նորս ո : ԺԵ . 24-26 :

Եւ եւս 'ի Տիմոֆէոսի առէ . « Եւ յայսնի խոկ մեծ է խորհուրդն առառուածպաշտութեան , որ երեւեցաւ

մարմարվ , որդ որացաւ Հոգւով , յայտնեցաւ Հրեշտակօց , քարտվեցու 'ի հեթանոսաւ հաւատարիմ եղեւ աշխարհի , և վերացաւ յերկինսաւ : Գ . 16 :

Զնյն է տեսանել և յայս պանծալիք բան Լամբրոնացւոյն յասելն նորս վասոն Քրիստոսի Տետոն մերոց . « Եւ այն որ էջ 'ի մեռեալը և ազատեաց զնուաս , եկին առ կենդանիս և միսիթարեաց զնուաս : Պարտ էր զի ընծայեացէ այնուհետեւ զարստարագն զոր առ յերկրէ րէ՝ այնմ , որ համեցաւ ընդ նուիրելն նորս : Պարտ էր , զի 'ի ձեռնն որ ստեղծ զմարդն անուպակիան , զիցէ զնոյն նորոգեալ ըստ առաջնն վայելութեանն Պարտ էր , զի արքացին ահարկու եւ լեալ թշնամեացն յաղթեաց , վիճակեցի նստիլ ընդառնմէ : Զօր յամբռաքահանցւոկետ յաւիտենից , և բարեխոս նմին քառաւոթեան : Պարտ էր առ հաւատչէի յուսցն մասնել 'ի յերկինսա , որպէս զի մարդիկ 'ի նոյն խարսխեալ 'ի նոյն փութացին օթելվանս : Պարտ էր , զի որոց շրջիքը 'ի մէջ օծից և կարձաց , և մահացու թունիւրն իսցիմք . լիցի արեւամին խրալ սրբիչք և մեծի շնորհաց Հոգւոյն ընձեռիչու : Ի ձառն Համբարձման :

Հ . Ո՞րպիսի կարեւորագոյն եւ յայսնի Ճշխրառութիւնս կարեմք իմաստափել յայս երկարաձիգ կարգէ մարգարէութեանց վիրաբերեալ առ Քրիստոս Փրկիչն մեր :

Պ . Արդէն յայտ է 'ի Սուրբ Գրոց , զի 'ի սկզբանէ աշխարհի յորմէ հետէ մեզք և անկումն Ադամաց կալաւ զամենայն սերունդս նորս . և ազգ մարդկան եղեւ անիծեալ յԱստուծոց . եւ յօրէ անտի խոկ սկսաւ շարունակ յաջորդութիւնն մարգարէից տուեալ Աստուծոց զգուշակումն խստաման իւրոց , որ խստացեալ էր առ արել զմեծահըրաց և մեծաւօք փրկիչմի , որ յայտնեւ

ըսց էր յաշխարհի ՚ի լրման ժամանակին իւրիւ թագաւոր Խարայէլք և փղրիչի Հրեից և Հեթանասոց . վասն օրոց ՚ի գարս գարս ակնկալեալ լինէր նա յայնց բարեպատ և սուրբ արտնց , որք ըստ կարի քաջածանիթ էին Սուրբ Գրոց . մանաւանդ ՚ի գարուն՝ յորում երեւեցաւ Քրիստոս . Ըստ այնմ թէ . « Եւ յարոյց զեզիւր փրկութեան ՚ի մեզ ՚ի տանիէ Դումիթի ծառացի իւրոց . Արգէն խօսեցաւ բերտնավ սրբայն , որք յաւիտենից մարդարէք նորա էին ու Պատ . Ա . 69 , 70 :

Եւ ՚ի Գործո Առաքելոց ՚ի գլուխ Գ . Հմ . 18—21 . ասէ . « Ա յլ Աստուած , որպէս յառաջադայն պատմեաց ՚ի բերանոց ամենայն Մարդարէից զարշարին Քրիստոսի իւրոց . նոյնպէս և կատարեաց . Արդ՝ ապահարեցէք եւ գարձարուք ՚ի չնչել զմեզս ձեր . որպէս զի եկեղեն ժամանակիք հանդըստեան Տեսան . և առաքեցէ զյառաջադայն զեկառետնն ձեր զՅիտուս Քրիստոս . Զի պարտ է յերկնից ընկունիլ , մինչեւ ՚ի ժամանակի ամենեցուն հաստատելոց , զորոց խօսեցաւ Աստուած ՚ի բերանոց սրբոց իւրոց Մարդարէից :

Հ . Բայց այս կոչեցեալն Քրիստոս որդի կուսին Մարիամու էր խսկապէս նոյն գերահրաշ և մեծազօր ամեն , ուրում Հրեացք եւ Հեթանասը ըստ խոստման Աստուածոց ակնկուլէին միշտ :

Պ . Ա յն , նոյն ինքն էր խոստաշցեալն Քրիստոս . քանզի այն ամենայն մարդարէութիւնք , որք ՚ի վեր այսր գրեցան վերաբերեալ առ Մեսիայն կամ օծեալն յԱստուածոց , այնք ամենայն ըստ վկայելոց Աւետարանչայն կատարեցան ՚ի Քրիստոս առանց նշոնախոց մի անկանելոց յօրինաց եւ ՚ի մարդարէիցն . վասն օրոց ոչ մնայ մեզ երբէք աեզի ինչ երկրայութեան , թէ

այս Քրիստոս Նաղոփացի որդի Մարիամն , զրմէ մինչեւ ցայս վայր զըրեցաւ , է նոյն ինքն խոստացեալն ՚ի սկզբանէ աշխարհի Քրիստոս Փրկիչն որդի մարդկան և Գոտն Աստուածոց , որ եկն բառնալ զմեզս աշխարհի , վասն որոց « Որ հաւատոց ՚ի նոտ , ոչ դատապարտեցի , և որ ոչ հաւատաց ՚ի նոտ , արգէն իսկ գատապարանալ է . զի ոչ հաւատաց յանուն Միածին որդուցն Աստուածոց ու Յովլ . Գ . 18 :

Հ . Ամբո՞ ՚ի վերայ այսր ուրեք ուրեք ՚ի պատասխանիս հարցման խմոց բերէիք գու զիկայութիւն Աւետարանչայն , բայց յանկալի է ինձ գիտել եթէ իրաւապէս գրողը Նոր Կատակարանաց նոյն չորեսին Աւետարանիչքն իցեն , այսինքն Մատթէոս , Մարկոս , Ղուկաս եւ Յովհաննէս՝ աշակերտաք Քրիստոսի : Քանդի հեղինակ Դախրաւ գրբոջ յօրինեալ ՚ի Հոլանդա , և այլք ումանք համարձակին ասել , թէ Նոր Կատակարանն յայլոց հնարեալ իցէ , և ոչ յականհոտես Առաքելոց գրեալ . և այն թէ յետ գարաւոր ամաց զինի համբառնալոցն Փրկչին մերոց , որով և ոչ հաւատան յայնչափ հրաշագործութիւնն Քրիստոսի կատարեալ ՚ի ճռ զովուրդսն Հրեաց :

Պ . Ա յու է ցնորք բանդագուշտնաց , և ոչ մի ինչ հաւատնութիւն յարգեանց իրացն , քանզի ընդ ամենայն երկիր վկայեն թէ , Աւետարանն Մատթէոսի նա ինքն գրեաց յԵրուսաղէմ քաղաքի ՚ի լեզու Երայիցի , զինի ութ ամի համբառնալոց Փրկչին ՚ի խնդրոց եկեղեցւոյն Երուսաղէմի :

Աւետարանն Մարկոսի , նա ինքն Մարկոս հրամանաւ Պետրոսի վիմի գրեաց յԱղեքսանդր քաղաքի ՚ի լեզու Եղիպատացի զինի 15 ամի համբառնալոց Փրկչին :

Աւետարանն Ղուկասու , նա ինքն

գրեաց հրամանաւ Պօզոսի Անսիսք քաղաքի ՚ի լեզու Ասորի, նյիսպէս ըդ կնի 15 ամի համբառնոլց Փրկչն:

Եւ Աւետարանն Յովհաննու, նո ինքն Յովհաննէս սիրելի աշակերտ Քրիստոսի գրեաց զինի 53 ամի համբառ նալց Փրկչն յԵփեսս քաղաքի ՚ի ինդրոյ եկեղեցւոյն Ասեայ ՚ի լեզու Յցն:

Այսմ վկացէ և որբազան Պօսուէ եպիսկոպոսն յասէլն նորս թէ, « Նոյն պէս և ճշմարտութիւն չորից Աւետարանցաց վիայ անհակառակելի արձանացեալ կան քրիստոնեայք, հեթանոսը եւ հերեսիսլոք: Միահամուռ ամենայն աղդ և աղինք՝ ոքք ընկալան զգիրն, և երագ երագ յեղին ՚ի բազմածայն լեզուս, ոչ ինչ երկմատեցին վասն ժամանակին կամ վասն արանցն զր գրեցին:

Այսոցի չետուն ընդդէմ բանս և հեթանոսք չեկաց հակառակ և կել սոս, այն որ անդստին ՚ի սկզբանէ մարտեաւ ընդդէմաստուածելին գլորոց: Չասաց ինչ և ամբարիչան Յուլիանա՝ որ անցեկագոյն էր ամենայնի և հետազօտեաց զամենայն, որովք հետք ինչ էր նշաւակել զիսսա: Նաև ընաւ այլ ոք ՚ի հեթանոսաց ոչ խիթաց երբէք ընդ այն: այլ ամենէքին միարան որոց ընծայէին քրիստոնեայքն զիսսա ասացին յօրինողս գրոցն:

Բայ նմին և հերեսիսլոք՝ թէպէտ և տագնասպէին ՚ի բանից Աւետարաննին, ըստ համարձակեցան ասել թէ այլոց ուրուք շարագրածք իցեն և ոչ աւշակերտացն Քրիստոսի: Նա աւանիկ ոչ ակաւոք ՚ի նոցանէ ականատես էին եղեցին: և որոց յանդիման իսկ զրեցան Աւետարանըն: Վասն որոց եթէ հնոր ինչ էր նենդութեան ՚ի ներքս անկանին, հուսպ ընդ հուսպ նշաւակեր, և անմարթ էր յաջործել այնմո: Վէսոք ադամոց, թ, հասոր, Երես 203, 204:

« Մարգարէ յարուցից նոյս յեղարոց իւրեանց իրեւ զրեց, և տաց զգաստգամն իմ ՚ի բերան նորա, եւ խօսեացի ընդ նոսս, որպէս և պատուիրեցից նմա: Եւ մարգ՝ որ ոչ լուիցէ զօր խօսիցի Մարգարէն յանունն իմ, ես խնդրեցից վրէմ ՚ի նմանէ ո: Ի գիր Օրինաց Ժ. 18, 19 Որ ունի: ականջս լսելոց լուիցէ:



Յիշատակարան և, երկու դէսպ Գեր. Ներսէս վարդապետի օրագրութեան առնուած:

Ա.

« Սուիրեալ ՚ի միշտակ Պարոն Խաչատրոց Գալստեան Շիրավեցոյ, Հայկաղեան սեպուհոյ, որ իրեւ զումը երեսուն էր ականաւոք եւ երեւելի վաճառական ՚ի կզզւոջ Պինսն կայ, որ և կառոց իւրավք գտինք զեկեղեցի Հայոց հյուկաս, որ ընդ անկեղծ աստուածսիրութիւն ունէր և ճըշմարիս հայրենասիրութիւն և ազգասիրութիւն: Որում երջանկութիւն մեծ էր օգնել համազգեաց իւրոց տնանկաց և թափառելոց, որոց աջոց ձեռին առուբք եւ ողբամութիւն անցոյտ էր ձախոցն, լստ վերին բանին, ստ փոխեցաւ յանցաւոք կենաց յերանութիւն ՚ի հասակի վաթառն ամաց ՚ի 26 Յունուարի, 1841 ՚ի Կալիսթոց ո:

Ա. երսիշեալ հանդուցեալ Աղայ  
Խաչատրյ համար կը պատճեփ թէ  
ի Պինանկ կղզին երբ Հայ ժողովուրդ  
ասկուամթիւ էր, Եկեղեցի շահնէին,  
պապականաց Եկեղեցին կ'երթացին : Ի  
բենց կրօնական պարտքերը կը կատա-  
րէին :

Լատինաց հազորդութեան տօնի  
օրը, երբ Աղայ Խաչատուր և ամեն  
Հայ ժողովուրդ ամենայն յարգանօք  
և խանարհ ակնածութեամբ հանդի-  
օին ներկայ կը գտնուէին, Լատին կը-  
զերը երբ թափօրուլ Աղայ Խաչատու-  
րի և Հայ ժողովուրդին կանդնած աեղը  
հասաւ, յանկարծ սուրբ խորհուրդը  
ծածկոցով մը գոցեցին, առ այս Աղայ  
Խաչատուր շիտթեալ պատճառուը հար-  
ցունելով, պատասխան ընդունեց թէ  
գուշը որբան որ մեր Եկեղեցին ընդու-  
նօծ էք և կ'ազօթէք, բայց Պապը չէք  
ընդունիք, հետեւաբար մեզ համար  
դուք հերձուած էք, ուստի սուրբ խոր-  
հուրդը ձեզմէ ծածկիլ պէտք է :

Առ այս պատասխան, Աղայ Խաչա-  
տուրն և բոլոր Հայ ժողովուրդն ան-  
միջապէս Եկեղեցին գուրս կ'ելլէն .  
Խաչատուր կ'ուխտէ այն օրը չը ճա-  
շել, մինչեւ որ Եկեղեցւոյ տեղ մը զը-  
նէ, հիմնելք փորէ և սկսել տայ, ա-  
պա ճաշէ : Իւր գրամալը անմիջա-  
պէս Եկեղեցւոյ տեղը կը գնեն, հի-  
մնելքն կ'ըսկիին փորել և շնութեան-  
նիւթերը կը հրամային բերել, որով  
սիրութ կը հանդարտի կ'ըսկիի ճաշել,  
այս բարի անձի անմահ յիշատակ կա-  
ռուցած Եկեղեցին մինչեւ ցայսօր պայ-  
ծառ և կանգուն կայ Պինանկայ կը դ-  
գւոյն մէջ թէեւ Աղայ Խաչատուր  
վերջն ի Կալկաթայ զնացած և հան  
վախճանած է :

Բ.

Հետեւեալ գէպքն ալ ՚ի Կալկա-  
թա Ասիրուու ըստուած թաղը պատա-  
հած է 25 տարի առաջ Հայազդի Սել-  
քոն Մանուկեան վաճառականին :

Կռապաշու քուրմին մէկը, որ Սել-  
քոն Մանուկեանին խիստ բարեկամ  
կը ձեւանար, որ մը կը մօանայ իրեն  
և կըսէ, տեսլ տեսայ և տեղ մը ան-  
թիւ գանձ կայ թաղուած, ևս չեմ  
կրնար զայն գանձը պահել, միայն թէ  
գու ինձ համար փոքր կռատուն մը  
շնէ, ևս անով կ'ապրիմ, ևս իմ տե-  
սած գանձի տեղը քեզցաց կ'ուտամ,  
թող քեզ լինի, այս երեւակայական  
շահէն խարուելով Հայ վաճառականը  
կռատունը կը շնէ եւ քուրմին կը  
յանձնէ 50 հազար զուրուշ ծախառով :

Երբ քուրմը իւր իրակոն շահը  
ձեռք կը բերէ, Հայու երեւակայական  
շահցին համար կ'ըսէ, չաստուածները  
այն տեղը ծածկեցին ինձմէ, ալ չեմ  
յիշեր թէ ուր տեղն է : Այս գէպքը  
կրնայ դաս մը համարուիլ այն կար-  
գի մարդկանց, որը յայտնի շահերը  
կը ձեռն, մնանի յօյներով յուսագ-  
րեալ Ովլիաննասի յատակէն անսպառ-  
գանձեր հանել կ'երաղեն :

Գ.

Աւրիշ գէպք մը և ՚ի հնդստան  
՚ի Սուրաթ քաղաք :

Պատրայէն Հայ ակնավաճառ մը ՚ի  
Սուրաթ զնալով Եկեղեցւոյն մերձ սե-  
նեակ մը կը վարձէ, առուտուր կը-  
նէ ամեն ազգի հետ, յաւուր միում  
տեղւոյն թագաւորի օրէնստասոյցն  
կ'երթայ յանուն թագաւորին քարեր  
գնելու, երբ Հայ ակնավաճառը մի-  
նակ կը դանէ, աղամհութեան ախտէ  
բորբոքեալ դաշոյն կը միէ վաճառա-

կանի փորբ կը մեռցունէ . և քարերը  
առնելով խոյս կուտայ , երկու օրէն  
վերջ , երբ Կիրակի օրը վաճառականն  
Եկեղեցի չ'երթար , հետաքրքիր կը լի-  
նին թէ ուր է վաճառականը , սենեա-  
կը կը գիմեն մարդուն դիակը կը գըտ-  
նեն , և խաւզարկութեամբ կը գտնեն  
մարդասպանը և գողցուած քարերը .  
Երբ թագաւորէն արդար վրէմիոնդ-  
րութեան հատուցում կը պահանջեն  
Հայերը , կը պատասխանէ թէ “ Հա-  
յու մը մահուան համար մեր օրէնս  
ուսուցին եղունքն անգամ կտրելու չէ :

Անդզեսցին որ այն կողմերը պատ-  
րաստ դիտող ժամանակի կըսպասէր  
Սուրամին առնելու , այս դէպքը յար-  
մար տոիթ համարելով կ'ուգայ քա-  
զաքը կը գրաւէ : Մարդասպանի մը  
անկրաւ պաշտպանութեան համար քա-  
զաք մը և իշխանութիւն զահ կ'ուտայ :

### ՀՈԴԻ ԺՈՂՈՎՐԴՈՅ

“ Ընկերութեան կապերը զօրացը-  
նելով բնութեանն խորտակել այնչափ  
երկիւղով է ” :

Պէտքարկեն ու Ան Պէտք :

“ Լուսոյն յաղթանակը մարդկոյին  
ըստութեան և մեծութեան խիստ նը-  
պաստաւոր է ” :

Տիկին Ալայել :

ՄԱՐԴԿՈՅՆ ամենագմնդակ տը-  
կարութիւնը հոգւոյն քունն է , որ  
մարդիկ երկրիս վայեն առանց բնա-  
ւին արթնալու կը սահին կ'անցնին :  
Ֆողովուրդը , որ օրուան ծանրութեան  
տակ կը հեծէ և որուն բոլոր ձիքը

աշխատութեան և հացի միակ մտած-  
ման մէջ անհետ կ'ըլլայ :

Այս կարմիր , կապոյտ , կանանչ ,  
նարընջագոյն ինքնաշորժ մէքենայք  
թմբուկի ձայնով կը քայլեն , կը շարուին  
առանց ցասման կը զարնուին , առանց  
խղճի և ատելութեան նախաճիր կը գոր-  
ծէն . մարդը առանց որ և է մտածման  
իրիկուն կը պառկի , առտուն կ'ելլէ , կը  
գործէ , կը նախաճաշէ , կը ճաշէ , կ'ընթ-  
րէ : Կենդանական շունչ , շարժմական  
նիւթ : Կը փափագէի այս ամբոխին  
գաղափարաց թիւը ճշդիւ գիտեալ .  
որ իւրաքանչիւր առառւ մեր տունե-  
րէն կ'ելլեն , փողոցը կը լեցնեն , հրա-  
պարակը կը ծածկեն , կը վազեն , ձայն  
կը բառնան , կը գահավիմեն , և զիշեր-  
ուան առջի ժամերը լուսութեամբ կ'ան-  
ցընեն :

Հարիւր հազար գլխէ զանգուած  
մ' է , որ արտաքս կրից քննուած , թէ  
ամենազնիւ զգացմունք ամենամաքտու-  
թաշակ և ամենէն վեհանձն կամք կը  
բացատրէ , որ զԱսկրատ կը հիսոյնէ և  
Անիթմոս կ'անիծէ , բայց ասոր իւրա-  
քանչիւր անդամ՝ ի մասնաւորի առած  
ընդհակառակին մարդկոյին գէմքով  
տեսակ մը կենդանի է , կարծես թէ  
աչք ունի և չը աեսներ , ականջ ունի  
և չը լսեր , միուր ունի և չը խորհիր , և  
ի վերայ այսր ամենայնի հոգի մը նիւ-  
թոց մէջ անդապացզ եղած է :

Կը հարցնեմ թէ ինչո՞ւ ճշմար-  
տութիւնն հազիւ ուրեմն խղճին մէջ  
մուտ գտած է , խօսքս բարբարոսաց  
համար չէ , այլ քաղաքակրթելոց :

Ինչո՞ւ ուրեմն մարդկութիւնն հա-  
մօրէն , բաց ՚ի հազուադիւտ զարտու-  
ղութենէն իւր կանիւակալ սովորու-  
թեանց մէջ զղթայուած կ'ապրի :

Պատմութիւնը ամենազարմանալի  
տեսիներով այս գործին կը պատաս-  
խանէ , նիրհեալ երկրագնդին զանա-

զան տեղերը իմաստնոց իբր ջահ մը՝  
փարոս մը երեւիլ կը տեսնեմ, պատն  
լցուը ազգերը կը կոչէ, իւրաքանչիւր  
ազգեր մարդու մը կամ Աստուծայ մը  
խորհուրդ կ'ընդունին: Մովսէս, Քօմ  
փիլիսոս, Պուտա, Մուհամետ, Սոլիրատ  
և ի վեր քան զառաա մարդկային աղ-  
դին Փրկիչ երկնային Տէրն մեր Յիսուս  
Քրիստոս, խոհուն ուղղներ և բարո-  
յախօս գլուխներ, որ իւրաքանչիւրը  
ժողովրդեան հոգի մը ներշնչելով բա-  
ժանեալ երկրագնդին կ'իջևն: Այս  
հանրացեալ իշխանութիւնը բնութեան  
օրինաց տեղբանելու կը փորձէ. և հան-  
ճարին բարցական խորհուրդն իրեւ  
ազգաց բնածին աղդումն գառնալու: .  
Եւ ազգերը իրենց օրէնադրին հանճա-  
րին համեմատ կը զարդանան. ասկէց  
բովացան Սպարտացւոց, Աթենացւոց  
և Հռովմայեցւոց հրաշալիքը: Իրենց  
մեծ արանց հոգիքն ամենին մէջ կ'ապ-  
րէնի. այնակէս որ ամենին իբրև մի մեծ  
զանգուած մեծ մարդու մը հոգին կը  
կրէր: Միջն գարու մէջ եւ մինչւ  
մեր օրերը անհամար միաբանական  
ուխաերը իրենց օրուայթ լորեցին. բա-  
զաքարիթեալ աշխարհի վրայ. սակայն  
Արեւմտեան հոգին մեծ մարդ մը չե-  
ղաւ, այլ Քրիստոսի Եկեղեցին. բայց  
ախոն, որ Պատին և նորա արբանեակ  
ներու չարութե և կրից գործիք գար-  
ձաւ, և անոնցմալ Քրիստոս փառա-  
ւորուելու տեղնախատուեցաւ: Ծայ-  
րահեղ ամբարշառութիւն: Պրահմանին  
և Հագարացւոյն խորհուրդը միշտ ա-  
րեւելք կը սահմանափակէր:

Նախնի ամեն Աստուծաբարանու-  
թիւնք եւ օրէնսդրութիւնք մեռած  
ըլլալով, մարդկային սեռը այս երեք  
հոգիներով միայն կ'ապրէր:

Թշնամի հոգիները որ զժողովուրդը  
կը բաժնէին, անոնց միաբը կը սահմա-  
նափակէին, հաւանական բարցականի

մը մեղաց և նախապաշտմանց մէջ  
մոլեռանդ կ'ընէին:

Այսօր ընկերական յեղափոխու-  
թիւնն կը կատարի, գաղափարը կը դար-  
գանան, ազգերը իմաստուն կ'ըլլան,  
այնչափ, որչափ որ իրենց մատաճմուեքն  
բարձր և հասուն ըլլայ: Այս ատեն  
իրենց հայրենական եւ կրօնական ա-  
ւանդութենէն կը բաժնուին: Հաւատքն  
զանոնք կը թողու. և օրէնսդրին հոգին  
զանոնք կը լբանէ, Սոսկալի և ամենա-  
մեծ յեղափոխութիւն, որ տիեզերը  
յուղած էր. վասն զի ձիգ կը թափէ ժո-  
ղովուրդն իրեն մտաց յիմարութեան  
յանձնել: Բայց նաև կը ջանայ խոփր-  
ներն և անջատումներն ջնջել, խորտա-  
կելով միանգամայն զանոնք բաժանող  
կրօնական իշխանութիւնք:

Այս բուռն արշաւանքին մէջ օր  
մը ամբողջ ազգերը մարդկութեան  
ցրուած անդամներն պարտի ՚ի մի կազ-  
մել և ձուլել ըատ երկնային Վարդա-  
պետին անսուտ բանին, « Եղիցին ՚ի մի  
հօտ և ՚ի մի հօվիտ ո, անոնց տալով  
բնութենէն առնուած միակ բարցա-  
կան եւ Աստուծայ գրկէն ընդունած  
հոգի մը:

Այս յեղափոխութիւնը արդէն  
Եւրոպաց սկսուած է, ուր միակ ժողո-  
վուրդ մը սկիտի ըլլայ զանազան սկ-  
տութեանց, թագաւորութեանց կամ  
հասարակապետութեանց բաժանեալ,  
որ սկիտի դիմեն մի և նոյն աղատու-  
թեան Յիսուսի Քրիստոսի մեր երեք  
նային Տիրոջ համաշխարհական Աւե-  
տարանին օրինաց ներքեւ, զոր Պազեռ-  
ամինի ժայռերուն գագաթը իր ձկնորս  
աշակերտաց աւանդեց և ըսաւ. « Գլ-  
նացէք և ամեն աշխարհ քարոզեցէք ո,  
և ահա այս երկնային օրէնքը երկրա-  
գընդին սկիտի իշխէ իր ուղիղ բարո-  
յականով եւ անստերիւր շշմարտու-  
թիւնով, որ նոյն ինքն Յիսուս Քրիս-

տոսն է սրուն կ'Նրկագաղդէ միշտ :

Ելմէ Մարինէն Թարգ .

Զաքար Մ . Համբարձումեան ,

Ուժուառուր : յԵրաստաշէմ :

ԲԻՆՇԵԽ ՄԸ ԵՒ ԵՐԵՔ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

**Ժ**ԱՄԱՆԱԿԲԻՆ ԵՐՈւՍԱՂԵՄԱՅ ԲԴԵՇ  
ԽԵՆ ԵՐԵՔ բարեկամներ ուներ , առա-  
ջնը չափազանց կը սիրեր . Երկրորդը  
սակաւ , Երրորդը՝ երբեմն երբեմն :

Օր մը թագաւորը հաշիւ ուզեց  
այս ԲԴԵՇՆԵՆ , նա ալ պատրաստու-  
թիւն սկսաւ տեսնել . մեկնելու միշտ  
ցին , առաջնին բարեկամը տեղէն չը  
շարժեցաւ և անհօգ իր իր սիրելցն  
վրայ . Երրորդը մինչեւ Յուզպէ զնաց  
հաւահանգիսար և զանի նաև գնելին  
յետց տեղը դարձաւ . Երրորդը , որ  
երբեմն երբեմն կը սիրեր և հաշիւ իր  
միտքէն կ'անցներ , իր հետը նաւը նըս-  
տաւ գնաց թագաւորին ստուանդ . և  
զանի արդարացնելով ազտոեց դատա-  
պարտութենէն :

Սոյն պատմոթենէն կարող նճք  
հետևեալ բարոյականց հանել :

**Թ**ագաւորը՝ Աստուած է , ԲԴԵՇ  
ԽԸ՝ մարդն է . Երեք բարեկամներէն  
առաջին բարեկամը՝ սակի . Երկրորդը  
աղդական և նման մարդիկ . Երրորդը  
առաջինութիւն և բարի գործ . սոկին  
որ տեղէն չը շարժիր . աղդականները  
զայն մինչեւ գերեզման կը տանին եւ  
թաղելն յետց յետ կը դառնան . իսկ  
առաքինութիւնը մինչեւ Աստուածոյ դա-  
տապատճենն առջեւը կելլէ զայն կ'ար-

գարացնէ թագաւորին յա խոհնական  
գաւառաբարտութենէն և Երինից մըշ-  
տընջենաւոր փառաց ժառանգորդ կը-  
նէ . Ուրեմն այս աշխարհիս վրայ մար-  
դուս ամենէն հաւատարիմ և անձնա-  
նանուէր բարեկամը առաքինութիւնն  
է . ով որ առաքինութեան զրահներով  
գոտէորուած է , թնդ անվեհեր դիմէ  
աշխարհիս փորձանաց մէջ . նա յաղ-  
թական է . զի Աստուած առաքինուեաց  
սրտին մէջ կը բնակի . Երջանկութիւն և  
արքայութիւն առաքինուցն ետեւէն  
կը վազէն . Երանին անսնց , որ առաքի-  
նական գործքերով Աստուածոյ հաճոց  
կըլլան . նոցա համար փառք աշխար-  
հիս և ճոխութիւն սնասիք են . նոցա  
համար յերկինս պատրաստուած է փու-  
ռաց եւ անմահութեան անթարշամ  
գագինին :

1874

Նիկողայոս Յ .

ԿԵԿԵՑԲԵՐ 25

Թարգումանույնութեան :

ՄԱՂԱԳԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ

**Ա.** Աժոռոցո Միաբան և Բարիլո-  
նի առաջնորդ Արժ . Վաղաքիս վար-  
դապետի աւազակներէն կողոպառուե-  
լուն վերայ Ազգային լրագիրը սմանք  
տարբեր լրւրեր հրատարակեցին , մեք  
իրողութիւնն իւր ստուգութեամբ  
ներկայնելու համար՝ արժան կը դա-  
տիք նոյն խակ Մաղաքիս վարդապետի  
համակն հրատարակել :

Ամենապատիւ Մրբացան Հայր ,

Կոյեմբեր 16 ին Զեր բարձր Արքայու-  
նութեան աղօթիւք ովզամբ ժամանեցի  
՚ի Տիգրանակերտ , բայց ոչ առանց

վշտոց քաղաքի քաղաքէս 8—9 ժամ  
հետի Գորաճապալ անուանեալ լիրին  
մէջ տասն չոփ աւազակաց հանդի  
պէլ կողապառուեցանք, մենք ըստ ա-  
մենը երեք անձնիք լինելով ամենեւին  
գէմ գնելու կարողութիւն չունե-  
նիք, սակայն Տիրոջ յատուկ մէկ խնա-  
մովը մեր կենացը խնայուեցաւ, իսկ  
մեր ինչքն ու ստակը թէպէտ տակու-  
ւին ամբողջապէս ձեռք բերուած չեն,  
բայց սյս բանը մեր ճանապարհորդու-  
թեան խափան չը կընար ըլլալ, ամսցա  
13 ին այսինքն վազը չէ միւս օր աստի  
մէկնելու զիտաւորութիւն ունիմ, և  
Զեր Սրբապնութեան աղօթքը թա-  
խանձանօք կը ժանեմ:

Աղջային պատմութիւնն այս է :

Նցէմքեր 15 ին ուրբաթ օր մենք  
կողապառուեցանք, յաջորդ շաբաթ օ-  
րը Տիրանակերտ մանելով ուղանիկ  
Բարձրապատիւ Մինասեան Յովհան-  
նէս էֆէնտիին գայիք, որն որ իւր ան  
կեզդ ցաւն յայանելով հանդերձ փու-  
թաց նախորդ կիւրակէ օրը Վաղի փու-  
շային գնալ և այս եղելութեան վրայ  
անոր ուշադրութիւնը հրաւիրել, մի-  
շեալ Վակէմ, էֆէնտիին ինդրանաց  
վրայ Վակի փաշայն խակայն մորդ հա-  
նեց աւազակները գտնելու համար.  
բայց հազիւ 15 օրէն կըսաւ վերա-  
դառնալ գացող մէճորը, այլ սակայն  
գտաւ աւազակները, որոնցմէ 6—7 ան-  
ձնիք փախչելով 2—3 կը ձերբակալուին,  
իմ ընչցի մեծագոյն մասն ալ կը յանձ-  
նեն մէճորին, որ բերելով Տէրութիւնն  
ձեռքով ինձ յանձնուեցաւ, այժմ՝  
1000 զուրուց չափ փոքր կարուստ մը  
ունիմ, զոր առանձին արշ-հալլ մը  
սահանինելու վրայ եմ և կը յուսամ  
օր Մինասեան էֆէնտիին շնորհիւ այս  
երկու առուր մէջ անսիք ևս յերեւան

կելեկն կոմ Կի փախորէն սասակ կը  
պահանջուի և կը յանձնուի ինձ, ե-  
թէ ուշանայ, ինչպէս վերը յիշեցի,  
ես չեմ սպասեր, այլ կը յանձնեմ  
գործը յիշեալ էֆէնտիին և ես կը շա-  
րունակեմ ճամբորդութիւնս:

Առ այժմ մնամ Զերդ Բարձր  
Սրբապնութեան խնարհ որդի

16 ԴԵԿ. 1874

Մաշտիս

Դ Տէֆրանիկը :

Հարդապէտ :

## Ա Զ Դ Ե Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն

Աղջային պարբերական հրատարակութիւն :

Երբ մեր Աղջային Պարբերական  
ները կը բազմանեան, կ'ուրախանամք  
և յառաջադիմութեան նշան կը կար-  
ծեմք : Արդարեւ պարբերականաց  
բազմանալն ուրախական երեւոյթ մ'  
է, վասն զի գեթ կը կարծեմք թէ ըն-  
թերցասիրութիւնը օր աւուր կ'ընդ-  
արձակի Աղջին մէջ, Բայց միթէ յա-  
ռաջադիմութիւնը միայն ըսկ ընդար-  
ձակուելովն կը կատարուի: Միթէ բռն  
յառաջադիմութիւնը ընթերցանելի  
հրատարակութեանց ընտրութենէն և  
սննդարար պարտնակութենէն կա-  
խումն չունի: Եթէ այսպէս խոր թա-  
փանձնիք և նիւթոց ընտրութեան մէջ  
յառաջադիմութիւնը որոնենք, պիտի  
սովորուինք խոստովանիլ, որ մեր Աղ-  
ջային պարբերականաց բազմանալն  
յառաջադիմութեան նշան չէ, վասն  
զի թէկ կը բազմանան, բայց զրեթէ  
նցնանշանն եւ նոյնիմաստ բաներ են:  
Բառականին պարբերական հրատարա-  
կութիւններ ունինք, բայց զրեթէ ա-  
մենաւն մէջ միայն երեք կետերու վե-

բոյ կը խօսուի՞ այն է Կրօնական, Աղ գոյին և Ք աղաքական, և այն եւս առանց մշտեալ և հասուն խորհրդածութեանց ։ Կրօնականներն մէծ ժուտմբ նոյնիմաստ են և բազմից կը ինեալ, Ազգայիններն մեծաւ մասամբ անընդհատ և տարտարայման վիճաբանութեանց շղթաներ են և մերթ ընդ մերթ անօդուտ բացագանցութիւնք ։ Խոկ Քաջաբականներն թարգմանական վերի վերոյ փոխառութիւնք են Եւրոպականլագրաց թերթերէն քաղուած և քանի մի Աղդային լրագրաց մէջ նոյնութեամբ կրկնուած, միթէ յառաջադիմութեան նշանն է այս, և միթէ Աղդային զարգացման նշան կը նշանար ուի՞ այս ընթացքին մէջ, քան լիցի ։ Թերեւս պիտի ըստու մեզ, որ մեր ժողովուրդը զարգացած չէ և կարող չէ ընտիր հրատարակութիւններէն բան հասկանալ, ուստի և պարբերական թերթերն ժողովուրդի մասաւորական զարգացման ստորին տատէ՛մանին հոմեմատ կ'ընթանան ։ Բայց ինչ յառաջադիմութիւն կարող է յերեւան դալ այն տեղ, ուր ժողովուրդ և պարբերական հրատարակութիւնք մի եւ նոյն աստիճանի վրոյ են, մի եւ նոյն գաղափարի մէջ կը մնան, մի և նոյն շրջանի մէջ կը հոլովին, մի և նոյն կարծիքներով կը տոգորին, եւ մի և նոյն սովորական կերակրով կը մնանին առանց յառաջադիմուկան քայլափոխ մի ընելու ։ Մեր համազումն այն է, որ պարբերական հրատարակութիւններն պէտք է բարձր լինին ժողովուրդն իրենց հետ բարձրացնեն. Ժողովուրդական սահմանափակ շրջանակէն արտաքց սիտի լինին, որպէս զի ժողովուրդեան առաջնորդեն դէպ ՚ի յառաջադիմութիւն ։

Պարբերական հրատարակութեան

այնպիսի հասուն գաղափարներ սիտի ունենան, որ ժողովուրդային կարծեաց աղջամզին մէջ իրբեւ լցո փայլին և ամենուն աչքերն իրենց գրաւեն ։ Պարբերական թերթերն եթէ այս վըսեմ հեղինակութիւնն ու աղդեցութիւնը չունին, կը նշանակէ, որ նոքակոյր առաջնորդ են կուրաց, ժողունք տսել, թէ կան պարբերականներ, որ ժողովուրդային մասաւորական զարգացման աստիճաննէն եւս ստորին են և այս ստորին վիճակով աւելի գայթակղութեան եւ անբարսցականութեան առաջնորդ կը լինին ժողովուրդեան, մերթ հայհոյելով, մերթ ստութիւն տարածելով, մերթ բարսցականի զէմ զինելով, մերթ ընդհանուրի օգուտոնի իրենց անձին զահելով, մերթ երազական լրետի և շինծու անցքեր յերիւրելով, և առ հասարակ պարբերական հրատարակութեան աստիճանը զլուարտան կարծելով, քան թէ աղդային մասաւորական և բարսցական վերաշնութեան արիտական մրցարան ։

Պարբերական հրատարակութեան բաղմանական այն ժամանակ միայն իրական յառաջադիմութեան նշան կը հոմարուի, երբ պարբերականներն միակերպ և նոյնանման չը լինին, այլ տարբեր : Կրօնական, Աղդային և Քաղաքական ճիւղերու համար երկու երկու յասուկ թերթեր շատ են և ոչ սակաւ և եթէ իրենց ընտրած մասն ըստ օրինի մշակեն, կարող են տեւականութիւնն ունենալ, համակրութիւն վաստիլ եւ իսկական յառաջադիմութեան գործիք համարուիլ ։

Այնուհետեւ կը մնան գիտութեանց, արուեստից և գաստիտուրակութեան վերաբերեալ յասուկ ճիւղերն, որոց համար մեր Աղդն տակաւին յասուկ պարբերական հրատա-

բազութիւններ չունի ևւ ունենալու շատիզէն ևս տակաւին հեռի է : Վասն զի մինչեւ ցարդ այս մասին ամենունին շարժում չը կայ : Ուր է մեր Աղջին մէջ իւր յատուկ թերթերն Բնագիրանն, Երիագիրական, Վահանագրական, Պատմագիրական, Հնագիրական, Գրաննական, Կրթական և այլ ճիւղերու : Ամէք բազմանային մեր մէջ ոչ թէ համանման, այլ յառաջադիմութեան և զարդացման յատուկ ճիւղերու մերաբերեալ թերթեր, այն ժամանակ արդարեւ մեր ազգային պարբերականներու առուելութիւնն պարծանիք պիտի լինէր մեր Աղջին : Բայց քանի որ յատուկ ճիւղերու ոչ մշակ կայ և ոչ մշակութիւն, քանի որ ազգային պարբերական մասամբ մածանութեան մէծաւ մասամբ արձագանիք են սամրական իրազութեանց . քանի որ նոր գաղտնապեսներ, նոր համոզումներ, և վերակենդանութեան նոր տարր չեն պարունակիր իրենց մէջ, և կենդանարար նոր չերմութիւն չեն հաղորդեր ժողովրդային կիսակենդան մարմնոյն, և նոր լցու չեն սփռեր նորա մշուշապատ աչ քերաւն, վերջապէս քանի որ պարբերականիք յատուկ կոչումն չունին, յատուկ նշանաբան չ'ունին, յատուկ ավաստութիւն և մշակութիւն չ'ունին, թերամութիւն է կարծել, որ ներկայ գրութեամբ և ներկայ ընթացքով շատ պարբերականներ ունենալ կը նշանակէ ազգային յառաջադիմութիւն ունենալ :

Մեր ազգային պարբերականներն գրիթէ առ հասարակ տագնապ կը կը բեն բաժանորդաց սակաւութեան մասին, և ինչ է այն տագնապին բուն ուստածառն, եթէ ոչ դարձեալ պարբերականաց համանմանութիւնն, անմըջոկ պարունակութիւնն, որով ժողովրդն օր աւուր կը պ ողի նոյն խիլ ընթերցափութեան մէջ . վասն զի

համ չ'ունեար և բան չ'ուանիր իւր կորդացածներէն . վասն զի ոչ իւր կորութեան համեմատ գրուած են, ոչ իւր ճաշակին ու բազին արծարծելու եղանակաւ մշակուած և պատրաստուածն, և ոչ այն մուաւոր ու բարցական հրազդըն ունին, որ իւր միտքըն ու սիրոն գրաւեն, իւր հարցասիրութիւնն գրգուեն և այնպէս ազգէն, որ համոզուի թէ իւր լսագրական բաժանորդագրութիւնն մեծամէծ օգուտներ ունի իրեն համար : Քանի քանի բաժանորդներ կան արգեօք, որ լոկ բարեկամութէ կամ թախանձանաց համար միայն բաժանորդ կը գրուին ոչ թէ բուն իրենց մուաւորապէս և բարցապէս շահուելու և օգուտ բաղելու համար :

Նետեւապէս, ամփոփելով մեր սցն համառօտ դիտովութիւնն, վճռաբար կարող եմք ասել, որ մեր Ազգային պարբերական հրատարակութիւններն չ'ունին բնաւ հասարակութեան վերաց այն ազգեցութիւնն ու հեղինակութիւնն, զսր պէտք է ունենային . չ'ունին այն կենդանական տարրն, որով կարող է ժողովարդն վերակենդանանապէլ . չ'ունին այն էլեքտրական դօրութիւնն, որով կարող է ընթերցող հասարակութիւնն ցնցիլ շարժիլ եւ յառաջադիմել : Մենք առ հասարակ կը խօսինք և չենք ուղեր հաղուագիւտ բացառութիւններն մատնանիշաւնել միայն թէ կը պատականիք ասել, որ կան նաև Ազգային թերթեր, որոնք հասարակութեան ստորին կարգի ըստորին հասկացողութենէն անդամցած են և իրենց տարածան աւելի բարոյական ապականութիւն է քան թէ որ և իցէ օգտակար ծառայութիւն ժողովրդեան :

Աւստի իրերեւ համոզում կը յացուեիք, որ մեր պարբերական հրատա-

բակութիւններն այն ժամանակ միայն  
սկիտի կարենան յառաջադիմական ակ-  
ղեցութիւն ունենալ, երբ սկսին մաս-  
նաւոր ճիւղեր մշակել, և այն ժամա-  
նակ միայն քաջալերութիւն պիտի գըտ-  
նեն, երբ ամեն օր հակասութեանց

մէջ ըս թաւալին, ամեն օր տարբեր  
գոյներ ըստանան, այլ միայն ձշմար-  
տութեան ծառայեն, որոյ մէջ է ամեն  
զօրութիւն մասաւորական և բարսյա-  
կան ազդեցութեան։

## ՄԵՂԱՅԱՍՈՒԹՈՅ

(Խոսք Ազգային երգչի \*)

**Ղ**ԱՐԻԲ 1 աեղ նաշաղ 2 եմ՝ հալսո 3 փէրիշան 4,  
Քանի որ կենդան եմ՝ մեղայ Աստուծոյ .  
Սուրբ Եկեղեցի՝ Քահանայ ըս կայ ,  
Տէր, քեղ խոստալանիմ՝, մեղայ Աստուծոյ ,  
**Մեղայ քո** ամենայն՝ սուրբ պատուիրանաց ,  
Շատ մեղք եմ՝ գործել ընդդէմ օրինաց .  
Հայր երկնաւոր Աստուծած՝ ձար մեղաւորաց ,  
Անզեղը ըս մեռանիմ՝ մեղայ Աստուծոյ :

\* **Ազգային երգչաց վերաց ար-**  
**դէն խօսած եմք Ախօնի անցած տարւոյ**  
**թիւերուն մէջ,** յայտնելով ՚ի միջն  
աշլոց, որ մեր աղբային երգիշներն  
հայրենասիրութեան եւ կրօնասիրու-  
թեան տեսակ մի քարոզիներ են : Ի-  
րենց քնարն առած յերկրէ յերկիր և  
քաղաքէ քաղաք կը թափառին . իրենց  
երգերով մերթ կուրախասացնեն, մերթ  
խրատ կը տան : Իրենց կեանքն գրեթէ  
շարունակ պանդխտութիւն է . շատ  
անդամ կը հիւանդանան իրենց ձանա-  
սպարհորդութեան մէջ, տակաւին քա-  
ղաք մի կամ գիւղ մի ըս հասած, շատ ան-  
գամ ժամերգութեան և պատարագի  
կարօտ կը մնան, թէ և շատ կը սիրեն :

Ազգային երգչաց կենաց սոյն պարա-  
գաներն, թէ և շատ հետաքրքրական,  
բայց կենասպարական կերպիւ գրուած  
և պահուած չեն ամենեւին, այլ մի-  
այն ազօտ կերպիւ իրենց երգերուն  
մէջ կը նշմարուին :

Այսպէս ահա կը տեսնեմք, որ  
Ա-Ն-Ա-Ր-Ե-Ն-Դ Զուղայեցի ազգային եր-  
գին, յայտնի չէ թէ ուր, պահդըլս-  
տութեան մէջ հիւանդանալով, եկե-  
ղեցի եւ քահանայ ըս գանելով իւր  
քնարն ձեռքն առած, թերեւս գետ-  
նախափի, եւ ծառի կամ քարի մը  
տակ, ձայն բարձրացնելով մշայ կը  
գոչէ Աստուծոյ եւ թողութիւն կը  
հայցէ :

1 Ղարք. — պահպահուած, ուսուր :

2 Կաշու. — հիւանդ, տկար:

3 Պատուած. — թշուած, պատուած:

4 Գետշու. — թշուանդ, տկար:

5 Հաւու. — վիճակ:

Տէր իմ եւ Աստուած՝ փառք քեզ գոհութիւն,  
Տնւր ինձ զըլջում բարի գործք արքայութիւն.  
Իմ անօրէն մեղացը՝ շրեորհեա թաղութիւն,  
Մեղացէս փոշման եմ՝ մեղայ Աստուծոյ:  
Մի թաղուր զիս, Տէր, առանց Ազի քոյ,  
Վասրն Սըրբայ անարատի Խաչի քոյ.  
Հայր մեղայ յերկինըն՝ եւ առաջի քոյ.  
Թողութիւն գըտանեմ՝ մեղայ Աստուծոյ:  
Գոշեմ մեղայ, Տէր իմ,՝ Աստուած ողորման,  
Բարերար, բազումնորմ եւ գըման.  
Մեղաւոր Արջունուս՝ տուր հոգեւոր հայ,  
Հետըս պաշար տանեմ՝ մեղայ Աստուծոյ:

Գերապատիւ Գալուստ Ծ. Վար-  
դապետն Փափազեանց, որ քանի մի  
ամսէ ՚ի վեր ՚ի Ծ. Աթուս կը գտնուի  
ուխտաւորական միջմարտութեամբ և  
օդափոխութեամբ իւր բազմամեայ  
ակարութիւնն կաղդուրելու և դըմ-  
ուարակիր ցաւերն բուժելու համար,

իւր գրաւոր երկուիրութիւններէն  
հետեւեալ երկու տաղաչափութիւն-  
ներն (մին իւր վաղամեռիկ Աշոտ որ-  
դւոյ մահուան առթիւ գրած, իսկ միւ-  
սըն Գերմաներէնէ թարգմանած) խրւ-  
բագրութեանս յանձնեց, զորս կը փու-  
թամք յօժարութեամբ հրատարակել:

## Ա Շ Ո Տ

### Ա.

Պետական գարունն արդէն եկել էր,  
Վարդակականիր առաւօտով ներկուած.  
Նուրբ մառախուղ ծմակըն շուրջ պատել էր,  
Ինչպէս շլարշ՝ նորահարսի ծածանուած:  
Աշոտս յայնժամ՝ Բեխ (1) աղբեր մօտ սիրտն ՚ի խինդ՝  
Նստած նայէր յայդ տեսարան երփնագեղ,  
Տեսաւ ինչպէս ծառոց սստերն խիտ առ խիտ  
Կախուած էին մէգի միջով շեշ ՚ի շեշ,

(1) Բէխ կամ Բէխ աղբիւր, կէս ժամ հեռի Շուշի քաղաքէն, ունի բարեհամ Հուր և գեղատեսիլ շընկոյք:

Ինչպէս արտօյմն արտի վլոյ ճախրելով  
Փառաբանում էր քաղցրաձայն Արարջին,  
Յօշ մարդերի վլոյ շաղլում էր մեղմով  
Նոր ոյժ տալու կիսաթառամ խոտերին :

Բ.

Եւ սոխակի անուշ երգն քաջովոր  
Յեղիեղվում էր ՚ի ըսելիս Աշոտին  
Մերթ ընդ մերթ զով զեփիւռների հնչելով,  
Մարդագետնի ամեն ծաղկունք բիւրաղդի  
Ցոց են տաղիս քաղցրամակիս ակնարկմամբ  
Առաւոտեան խայն խաղաղ ժամեն Աշոտին :

Այդ աեսարան չքեղ վերին ազդեցմամբ  
Աքանչացաց իսպառ նորա զհոգին,  
Աստուած կանչեց՝ թառանիչ քաշեց նա խորին,  
Իւր դոզդոչուն սիպտակ ձեռներն իբրեւ լոյս,  
Իւր աչքերն լի ջերմաջերմ եռանդով,  
Բարձրացրուց պահ մի այնպէս յերկին կըս,  
Ապա հեղիկ ասաւ անոյշ նա ձայնով :

Գ.

Ճշմարիս է և ինչ որ հայրիկս ասել է,  
Թէ կոյ Աստուած, որ ամեն բան յիւրն ՚ի զարդ  
Հրաշագործել իմ շուրջ այս տեղ զբել է ո,  
Որոց ՚ի տես օրտիկս ՚ի թինդ ցնծոյ արդ,  
Եւ առաւել քան զառաւել փայլում էր  
Ի վարդագեղ նորա անմեղ երեսին  
Եռանդն հոգւոյն, եւ նոր սիրով վառվում էր.  
Արդէն, արդէն, եւ միշտ այնպէս գեղանի  
Ջերմ արտասուք աչքերիցն է վեր ածում,  
Ինչպէս շուշանն առաւոտեան զով ցօղով  
Թայց է լինում, փայլն առաւել շողովում  
Այնպէս Աշոտս այն օր ճոխ էր իւր գեղով :

Դ.

“Եթէ Աստուած այս աշխարհը ո, կըրինում է,  
Այսափ սիրուն բաներով է զարդարում,  
Ապ’ այն մարդոյ ուրախութիւնըն որչափ է,  
Որ երկնքումըն նորա երեսըն է տեսնում,  
Ո՛հ, տնւր ինձ, Տէր, որ ես դարձած հըրեշտակ

Այս վաղանցիկ գարնանային աշխարհքէս  
Թըռչմ, գամ ես անեղծ աշխարհդ այդ արագ,  
Որ տեղ մայրիկըս, վազուց է որ կանչել ես:  
Եւ գուցէ նա, աւաղ, սիրով մայրենի  
Ցիշում է արդ իրա որդւց Աշոտին ո:

Ե.

Իսկ ես հայրիկըս կէս մի ուրախ կէս տըրտում  
Լըռիկ կանգնուծ կանանց թուփի քամակից,  
Ամեն խօսքին ուշիւ ականջ եմ դընում,  
Յափրտակուած գեղատընուր Աշոտից:  
Եւ հայրագութ սիրով յայնժամ բորբոքուած  
Խիստ տագնապաւ մօտ Աշոտիս եմ վազում,  
Եւ երկար ժամ նորան սըրտիս հուպ տուած:  
Նունչըս նորա շընչի հետ եմ ես խառնում:  
Եւ հըրափայլ իմ աչքերիցըն ծածուկ  
Վարդակարմիր ծընոտի վերայ Աշոտիս  
Մին քանի կաթ թափում եմ ես արտասուք.  
Ո՛չ, սաստիկ էր յայնժամ փըղձուկըն իմ սըրտիս:

Զ.

Աշնա, ասի ապա նըմա կականմամբ:  
Քո Աստուծոյն քան զայդ աղօթք զօրտուոր  
Դու արել չ'ես բնաւ այդպէս եռանդեամբ:  
Զայնիդ լըսեց անշուշտ քո հայր երկնաւոր  
Արդ՝ երբ հրեշտակ դարձած գընաս Տէրիդ մօտ,  
Եւ սաւառնես շուրջ երկնակեաց քո մօրը,  
Օրհնիր յայնժամ էլի այս օրըն, իմ Աշոտ,  
Եւ միտըդ բեր երկընքումըն քո հօրը:

ՀԱՅՐ ՄԵՐ ՄԵՐ

Ա.

ՀԱՅՐ ՄԵՐ՝ դու որ քան զաստեղըս,  
Եւ քան զարեւ բարձրումըն ես.  
Որդեգրելով մեղի քեղ,  
Յաւետ գըթաս քան սկատես:

Բ.

ՄԵՐ օմեւանըն այս խոնարհ,  
Երկիրս ըլի քեղ տաճար.  
Ուր քո անունըդ սուրբ ըլի,  
Ոլողէս յերկինըս լուսափառ:

Գ.

Արքայութիւնդ որ երկրումն ,  
Սըրբոց արդէն է ըսկըսել .  
Հաճիր որ գայ ամենուս ,  
Որքեղ որդի ենք եղել :

Դ.

Քո պատութրանըն ընդունայն ,  
Թող չ'անցանէ , ով Աստուած .  
Այս որ մեր կենացն համայն ,  
Ամեն օրուան տո՛ր մեզ հաց :

Ե.

Խաղաղութեան հեղ հոգին ,  
Միշտ մեզ տիրէ ամենուն ,  
Որ ներենք մեր զբողին  
Որպէս և դու ես ներում :

Զ.

Քո զօրութիւն մեղի հետ  
Ըլի մեր գայթոս ճամբում ,  
Օքնիր մեղի ետ ընդ ետ  
Երբ փորձանքն է մերձենում :

Է.

Մեր կըսից հետ կռվումըն ,  
Երբ չարըն մեղ ընկըճէ ,  
Մի թող որ նա մեր հոգուն ,  
Տիրէ , երկնից մեղ զպէ :

Ը.

Մեր լայն եւ նեղ օրերումն  
Քո բանդ ըլի առաջնորդ ,  
Որ բո՞ փառացդ անսպատում  
Ամենքս ըլինք ժառանգորդ :

Թ.

Որովհետեւ փառք պատիւ  
Քեղ անեղիդ պատիւնի ,  
Արքայութիւն զօրութիւն  
Դարուց ՚ի դարս եւ հիմի :



ԴՐՈՅ ՈՒ ՏՐՈՅ

ԵՒ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԿԻԹ ԿԱՄ ՄՀԱՅԻ ԴՈՒՌ

ԾՐԱԳՐԵԿՑ Գ. Վ. Ա. ԱՐՄԱՆՅԱԿԵԱՆՑ :

Փարբիկ է սոյն Մատենիկ . բայց  
պարունակութեամբ յոյժ բաղըրիկ :  
Կը տեսնես իւր մէջ Հայրենեաց սիւ-  
րուն նկարագիր , բերանացի աւան-  
դութեանց ծրագիր , վէպեր ու ա-  
ռատղելներ բնածիր , և ամեն տեղ գիր  
ու բիր՝ անխափիր : Ընդարձակ չէ , բայց  
միակ է պարունակութեան կողմէն .  
Ճարտարահիւս չէ , բայց բնահիւս է .  
և այս է իւր մեծ արժանաւորութիւնն :  
Լեզուն փայլուն չէ . բայց սահուն է .  
բանաստեղծական չէ . բայց բնաստեղ-  
ծական է , բնութենէն առնուած է ,  
բնական գրուած է , ուստի և բնական  
հրապոյր ունի : Ով որ բնութիւն կը  
սիրէ , ով որ Հայրենիք կը սիրէ , ով որ  
ժողովուրդ կը սիրէ , ով որ ժողովրդա-  
յին աւանդութեանց , զրուցաց և վե-  
պաց հետքեր կ'որոնէ , անհնար է որ  
Գրուն ՈՒ ԲՐՈՅՆ սիրով ըստ կարգաց :

Մէք շատ անգամ կրկնած եմք ,  
որ մեր Հայ Հայրենեաց պէս Հայ ժո-  
ղովրդեան կեանքն ես անմշակ է , հե-  
տագառուած , քննուած և գնահատ-  
ուած չէ : Աղջի աղդի յիշատակներու ,  
սուլորութեանց , վարուց ու բարուց  
Հանգեր կան , որոնք փորուան , զըս-  
նուած և զտուած չեն : Աշխարհ , որ  
որրան եղած է Մարդկութեան , աշ-  
խարհ , որ խանձարուր եղած է Քրիս-  
տոնէութեան , աշխարհ , որ միցարան  
եղած է մարտիր և պատերազմի , աշ-  
խարհ , որ հանգիսարան եղած է հա-  
ւատոց և նահատակութեան , այս աշ-  
խարհն գանձեր ունի իւր մէջ անտիր  
ջրհեղեղեան ժամանակներէն սկսած ,

տւանիդութիւններ և զբոցներ ունի իւրաքաւ հետ խառնուած, հեթանոսական ընդ Փրիստոնէականին, տրտմականն ընդ ուրախականին, վիշտականն ընդ ընդ հարյականին, գիւտիկանն ընդ հրեշտականին, առասպելականն ընդ իրականին, և այն և այն։ Բայց ո՞լ է հետախուզողն, ո՞լ է քըն նող քբքրողն և ի լոց գրաւօր աշխարհի հանողն։ Նոյն խել ԳրՈՅ ու ԲրՈՅ մատենիկան բանասէր հեղինակն ահու գողով կը ծրագրէ իւր գրքոյին. կը սոսկաց որ ընթերցողք պիտի ծիծաղին իւր վերաց, կասկած ունի, որ իւր մատենիկին պիտի ծաղըուի իրբեւ արնոտեաց ծրագիր։

Բայց սիսալ է այս կտսկածն ու տարակոյան. ընդ հակառակին՝ ԳրՈՅ ու ԲրՈՅի նման աշխատասիրութիւններն մեծ արմէք ունին բանասիրաց առջև։ Նոքա ժողովրդեան ասից եւ խօսից պատկերն են. նոքա ժողովրդոյին հասկացողութեան նկարն են. նոքա Աղբային բանաւոր աւանդութեանց կեն դանագիրն են. Ով որ սոյնավիս աշխատասիրութիւններն կը ծազրէ, իւր անձն կը ծազրէ, իւր ժողովրդոյն կը ծազրէ, իւր Աղբն կը ծազրէ։ Ո՞ր ժողովուրդն է, որ նախասպաշտումներ չունի. ո՞ր ազգն է, որ տւասպելներ չունի. ո՞ր երկիրն է, որ աւանդական կամ բանաւոր գրականութիւն չունի։ Եթէ լրւաւորեալ Զաւեցերից լունական եւ շինական ժողովրդոց մէջ շվագայիս, այնավիսի նախապաշտումներ կը տեսնես, այնավիսի հընաւանդ բաներ կը նշանարես, որոց նմաններն թերեւս չը կան Հայաստանի մէջ։ Բայց գիւտիկաններն ամենեւին չեն ծազրեր, այլ կը հետախուզողն, կը քննեն և ժողովրդոյին կենաց պատմական յիշտակարաններ կը կոզմեն։ Ինչ որ է մեր ժողովուրդն, նոյն

է և ԳրՈՅն ու ԲրՈՅն և իւր նման ծրագրութիւններն։ Մեր ժողովուրդն առանց օտար գունով պահնելու, առանց օտարութի ձեւով ու ներկալով որն գուրելու համար, ԳրՈՅ ու ԲրՈՅ մատենիկան նման գրքեր պիտի են, որպէս զի հմանամբ և զգամբ թէ բնչ ունի, բնչ կորուսած է, բնչ խառնած է, բնչ այլացած է, բնչովէս յառաջ եկած է, բնչովէս պահպանուած է, բնչ է իւր գեղեցիութիւնն, բնչ է իւր տը գեղութիւնն, բնչ է իւր կեանքն ու կենցաղն, բնչ աստիճանի զարգացման մէջ է իւր միաբն ու սիրտն։

Այս եղանակաւ կարող ենք ճըշգրիտ գաղափար ունենալ մեր ժողովը գեան վերաց, այս մանապարհու կարող ենք ժողովրդոյին կենաց սասցդ պատմութիւն պատրաստել. վասն զի մեր ունեցած պատմութիւններն ժողովրդոյին կենաց պատմութիւններ չեն, այլ մանաւոր անձանց, մասնաւոր գիստաց, թագաւորաց, իշխանաց, պատերազմոց և արիւնհեղութեանց, ինչպէս էին ամեն ազգաց պատմութիւններն մինչեւ ներկայ գարս։

Եթէ մանրաման քննութեան առնումք ԳրՈՅ ու ԲրՈՅ մատենիկան որպառուակութիւնն, շատ բաներ կարող ենք իմաստասիրել։ Այն աեղ կը տեսնեմք սոսկման և զարհութրանաց առասպելներ, որ նշան է թէ նոյն երկիրն միշտ ահուգողի մէջ եղած է շվագայ թշնամիներէն։ Այն աեղ կը տեսնեմք կրօնասիրական անթիւ աւանդութիւններ, որ նշան է թէ բաղմախուսն նեղութեանց մէջ ամեն բան որբացուցած է։ Ամենէն աւելի,

այն տեղ կը տեսնեմք, որ մեր երկիւրըն ազատութիւն չ'է ունեցած, ուստի ուրիշ ազգաց նման իւր կեանքըն ու կենցաղն չեն երգուած, իւր աւանդութիւններն ու զլոցներն չեն նուագուած, վասն զի բանաստեղծութիւն, քերթութիւն, և ճարտարախօսութիւն միայն ազատութեան հողացն վերաց կը ծըն ու կը ծաղին:

Կայրենեաց սէրն նոր պէտք է բանաստեղծներ յարուցանէ. ժողովորդեան կեանքն նոր պէտք է պատմիչներ և վիպասաններ ունենաց, և այս ուրիշ բանով ըլլինիք, եթէ ոչ ԳՐՈՑ ու ԲՐՈՑի նման երկասիրութեանց բաղմանալով:

### ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ա. Ծննդեան եւ Սկզբութեան հանգէսն ամենայն փառաւորութեամբ և խաղաղութեամբ կատարուեցաւ. ՚ի Ա. Բեթլէհէմ: Սոյն Տօնախմբութեան ժամանակ մեծ համակրութեամբ վարուեցան Յցնիք և մինչեւ սնդամ մեր Ա. Պատրիարքի երթալու և դառնալու ժամանակ Ա. Եղիայի վանուց զանգակներն սկսան հնչեցնել ՚ի պատիւ Ա. Պատրիարքին և համօրէն ուղիկաց:

Ակայն սոյն քրիստոնեավայել խաղաղութեան արտաքին ցոյցերն երկար ըլլ տեւեցին: Յետ ութն աւուրց ՚ի Տօնի Անուանակոչութեան Տեառն, ըստ հնաւանդ սովորութեան, յետ Պատարագին մեր Տեսուչն սիւնազարդ գաւթէն անցնելու ժամանակ Յցնիք սկսան դիմադրել, զանգակն հնչեցնել և իրենց քաղաքացի ժողովուրդն ՚ի կուիւ հրաւիրել, դաւթի փայտեաց դուռն գոյցել, մեր Միաբաններն պաշարել և բիրերով ծեծել:

Սոյն կուոյն մէջ մէր վանուց խոհարաբին գլուխն սաստիկ վիրաւորուելով յԵրուասովէմ բերուեցաւ և Առեմ. Փառացին ներկայացաւ արիւ-

նաթաթաւ, Փառացին Բեթլէհէմի վըրդովման առաջն առնելու կարեւոր միջոցներն ձեռք առնելէն զինի՝ կամեցաւ քննութիւն բանալ եւ յանցապարաներն պատմել ըստ արժանեցն: Բայց Յունաց Ա. Պատրիարքի կողմէն թարգմանն ներկայացաւ մեր Ա. Պատրիարքին, յայտնելով որ առանց Պատրիարքական վարչութեան գիտութեան կատարուած է այդ դիմադրութիւնն, ուստի գործն քննութեան ըլլ ձգելու համար՝ իրենք պատրաստ են յանցաւորներն մեր Պատրիարքարանն կոչել եւ ներողութիւն խնդրել տուլմեր Ա. Պատրիարքին և ապա ինքեանք առանձինն իրենց վարչութեամբ պատմել առանց այլոց միջամտութեան:

Մեր Ա. Պատրիարքն Քրիստոնէական համարաւոր Տօնից և այցելութեանց առթիւ ներողամտութեան հոգւովը ընդունեց Յունաց Պատրիարքի առաջարկութիւնն և յանցուորներն գալով ներողութիւն խնդրեցին և գործն այսպէս վերջացաւ և Փառացին հաղորդուեցաւ:

Երկար ժամանակէն ՚ի վեր Տօնական այցելութիւններն ընդհատած էին Մեր եւ Յունաց Պատրիարքաց մէջ, ներկայ Վանեմ. Փառացի խաղաղասիրական միջամտութեամբ վերըստին սկսան եւ մեր Ա. Պատրիարքն արդէն այցելութեան գնաց Յունաց Ա. Պատրիարքին, և սա անշուշտ վախագարձ այցելութեան պիտի գայ:

(Տես Թիւ 1874, Դեկտեմբեր 51:)

ԵՐԵՍ	ՏՈՂ	ՄԻԱՆ	ՎՐԵՊԱԿ	ՈՒՂԱԿ
275	5	Ա.	Թիւերու	ձեւերու
"	5	Բ.	Վարպետութեց	Վարդապետութեց
"	50	Բ.	բարձրացեր	բարձրացի՛ր
274	28	Բ.	անսպան	անսպան
275	25	Ա.	եղերանց	եղերանց
"	50	Բ.	մէծ, հասորա	մէծ հասարակու
"	50	Բ.	կաղկութե	պետութիւն
"	50	Բ.	ժաղավորդ, թու	ժաղավորդ, թաւոր

	ԴՐԱ	ԳՐԱ
Հեղերէն խոշորագիր. Տպեալ 1869.	2	30
Հեղերիսոս եւ Մարիամ. Տպեալ 1870.	2	20
Հրահանդ ովոյ, գործ Արդեզիան Յավսէկի վարժապետի. Տպ. 1870.	2	2
Ղերուբնա Եդեսացի. եւ Եսայի կաթողիկոս Աղուանից. Տպեալ 1868.	3	3
Ճաշոց Գիրք. Տպեալ 1873.	300	300
Ճառ հաղորդութեան. Տպեալ 1860.	4	4
Ճառ դպրոցական. Երկու վարչը տեսարանին. Տպեալ 1863 եւ Թուրք 1867.	14	30
Ճարտասանութիւն առ ճեռն. աշխատավորմաց Եղաղար Մուրտանան.	3	
Մատոնադրութիւն նախնաց. Տպեալ 1856.	6	
Մատոնէռ Ուռհայեցի. գործ նախնաց ԲԲ գարու. Տպեալ 1869.	14	
Մեկնութիւն Եփեացւոց. Տպեալ 1850.	25	
Մեկնութիւն յայտնութեան. Ներսիսի Ամբողջացոյ. Տպեալ 1855.	10	
Միայնի Ասուոյ ժամանակադրութիւն. գործ ԲԲ գար. Տպեալ 1871.	16	
— Եղին՝ ուլիս դըմագով բաղդասուած վարչը ինչ տարբերութեամբ.	12	
Յալշանէն կաթողիկոս. պատմութիւն Հայոց. գործ նախնաց Թ. գարու.	10	
Յալշի գեղեցիկ. Տպեալ 1849.	10	
Յարմկ. աղօթամասոց Ա. Հոն մերոյ գրիգորի Նարեկացւոյ. Տպ. 1868.	12	
Կար ընթերցարան. Տպեալ 1868.	5	
Ողբերդութիւն ՚ի մեծն Ներսէս. Տպեալ 1863.	4	
Ութոտ հայրենասիրի. Բ. Տիոլ 1874.	4	
Ուսումն բարուց. Տպեալ 1857.	18	
Ուսումն արամագանութեան. Տպեալ 1869.	3	
Պատմութիւն Ա. Գրոց. Տպեալ 1867.	8	
Պատմութիւն Նոր Կրակարանի. Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Ա. Երուսաղէմի. Քաղուածոյ թարգմանութեամբ. Տպ. 1872.	5	
Պատմութիւն Երաւանականի. աշխատավորմաց Խորեն Վարդապետ. (*)	8	
Պատմութիւն Ա. Լուսառորի. Տպեալ 1867.	4	
Պատմութիւն Լէմկթինուրայ. Տպեալ 1873.	10	
Պատմութիւն Հայոց. Տպեալ 1870.	6	
Պատմութիւն բարոյական. Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Հայուաննեաց. առաքելական Ա. Եկեղեցւոյ. Տպեալ 1872.	16	
Պատմութիւն Երկամեոյ սրան Համութիւն ՚ի Հավելատան. Տպեալ 1871.	20	
— Եղին՝ Գաղղիարէն լեզուա.	20	
Պատմութիւն այլ եւ այլ անդամ տպուած.	10	
— Եղին՝ մեծ դիրքով	6	
— Եղինը միջամկ դպրոցներու համար. Տպեալ 1873.	6	
Եղինը՝ վարչը դիրքով եւ մանր դրով.	3	
Արօն օրագիր. կուղմալ 1866 էն մինչեւ 1873. աշխարհիկ լեզուա.	40	
Առողջութիւն Երուսաղէմի. Տպեալ 1859. (**)	4	
Ա արժութիւն վրասասց մանկանց. Տպեալ 1868.	6	
Տանզիլլ անդամութիւն Երուսաղէմի. Տպեալ 1855. (*)	3	
Տարերք իմաստափրութեան. Տպեալ 1852. (*)	6	
Տեսութիւն հովուալան. Տպեալ 1856. (*)	8	
Տրամադրանութիւն. Պատուելի Գլիգորի Փէտիմալման. Տպեալ 1855. (*)	18	
Տօնացյց. Տպեալ 1868.	10	
Ֆերական. Հին սնով. Տպեալ 1872.	20	
Ֆերական Գաղղիւրէն լեզուի. Տպեալ 1871.	2	20
Ֆերականութիւն Հայերէն լեզուի. Տպեալ 1870.	4	
Ֆերականութիւն Գաղղիւրէն լեզուի. Տպեալ 1869.	3	
Ֆրիսանէական համառա. Հայերէն եւ Արակերէն լեզուա. Տպ. 1870.	2	
Գրացոյց եւ գուշակութիւնք օդոց.	1	

# ՅԱՆԿ

## ՅՈՒՆՎԱՐ

ԿԱՐ ՏԱՐԻ . — Խորհրդածութիւն կենաց եւ	
մահուան վրայ . . . . .	1—4
Մարդարէական յարակցութիւն ընդ մէջ Հին	
և Նոր Կտակարանաց . (Նոր և Գլուխ) . . .	5—10
Յիշատակարան և երկու դեպք . . . . .	10—12
Հոգի ժողովրդաց . . . . .	12—14
Բդեշն մը և երեք բարեկամներ . . . . .	14
Մաղոքիս վարդ ապետ . . . . .	14—15
Ազգեցութիւն Ազգային պարբերական հրա-	
տարակութեանց . . . . .	15—18
Մեղայ Աստուծոյ . . . . .	18—19
Աշոտ . . . . .	19—21
Հայր մեր . . . . .	21—22
Գոռոց ու Բրոց . . . . .	22—24
Ժամանակագրականք . . . . .	24

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօն ամնէ ամիս կը հրատարակեամ 24 երեսէ բազկացեալ մ. կու. իւս  
ութածալ թղթալ :
- Բ. Տարեկան գինն է Երկու արծակ Մշճիալիք : Հանդերձ Հանագարհի  
ծախոսվը կանօնիկ վճարելի :
- Գ. Զատ տէտրակ առնել աւզողը : պէտք է ամեն մէկ տէտրին չըրտ գա-  
հեկան վճարել :